ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բովանդակություն

Ներածական մաս 3 էջ

Ամփոփագիր 4-5 էջեր

Անկախ հաշվեքննության կարծիք 6-7 էջեր

Հաշվեքննության օբյեկտի
Ֆինանսական ցուցանիշները 8-10 էջեր

Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների կամ դրանց
բացակայության վերաբերյալ գրառումներ 11 -85 էջեր

Առաջարկություններ 86 էջ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 71-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ոստիկանություն:
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության ոստիկանության ֆինանսատնտեսական գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենք, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք պետական գնման պայմանագրեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	Նախատեսված էր 2020 թվականի հունիսի 8-ից մինչև դեկտեմբերի 31-ը: Հաշվեքննությունը կասեցվել է 2020 թվականի սեպտեմբերի 30-ին թիվ 168-Ա որոշմամբ, վերսկսվել է նոյեմբերի 20-ին թիվ 171-Ա որոշմամբ: Հաշվեքննության կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2021 թվականի մարտի 31–ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «ՀՀ հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության նախագծի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի ուղեցույցի» համաձայն: Իրականացվել է համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի իններորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ոստիկանության և «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ միջև կնքված գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի շրջանակում հանձնման ընդունման արձանագրություններով աշխատողների աշխատանքի վարձատրության համար 2018 թվականին վճարվել է հատուցման ենթակա գումարից առնվազն 14,763.7 հազ. դրամով ավելի, իսկ 2019 թվականին ավելի է վճարվել առնվազն 27,628.5 հազ. դրամ:

«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ և «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ միջև կնքված պայմանագրի շրջանակներում ըստ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ իրեն պատկանող հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող 141 տպասալիկները նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով օգտագործվում են հենց նույն «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ կողմից, և հետևաբար, չի հիմնավորվում այդ տպասալիկների ծրագրային ապահովման «լիցենզիաների» արժեքի վճարումը պատվիրատուի՝ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ կողմից, որը փաստացի կազմում է տարեկան 141,000.0 հազ. դրամ (ըստ գնահաշվարկի՝ յուրաքանչյուր տպասալիկի «լիցենզիան»՝ 1,000.0 հազ. դրամ): Ընդ որում, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության պաշտոնական կայքում «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ անունով որպես հեղինակային իրավունքի օբյեկտ գրանցված է միայն «ELLIPS» ապրանքային նշանը և չի հիմնավորվում տպասալիկների հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսանալը: Բացի այդ, հաշվարկային տվյալների բացակայության պատճառով հնարավոր չէ գնահատել պայմանագրի տեխնիկական բնութագրի 3-րդ բաղադրիչով Երևան քաղաքում երեք սերվերների ամենօրյա տեխնիկական սպասարկման և անխափան աշխատանքի համար պայմանագրերով նախատեսված տարեկան 112,000.0 հազ. դրամ ծախսի չափի հիմնավորումը:

ՀՀ ոստիկանության կողմից հանդերձանքի գնման համար 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ մատակարար կազմակերպությունների կողմից չմատակարարված 216,719.9 հազ. դրամի ապրանքների դիմաց պետական բյուջե ենթակա էր վճարման պայմանագրերի ապահովման 10 տոկոսի չափով գումար, ինչպես նաև ենթակա էր հաշվարկել և գանձել չմատակարարված ապրանքների մատակարարման ժամկետների ուշացված օրերի համար պայմանագրերով նախատեսված տույժերը՝ առնվազն 2,941.1 հազ. դրամ:

Համաձայն ՀՀ ոստիկանության հետ կնքված պայմանագրերի, «Հայփոստ» ՓԲԸ մատուցում է նաև լրացուցիչ ծառայություններ՝ ավտոմատացված ծալում, ավտոմատացված ծրարավորում, թղթի ներդրում ծրարների մեջ, հասցեի տպագրում, ծրար: Սակայն, լրացուցիչ այդ ծառայությունների մատուցման արժեքները սահմանված չեն պայմանագրերով և հնարավոր չէ գնահատել փոստային սակագներից ավելի վճարված գումարների հիմնավորումը:

«Էյչ Գրուպ» ՍՊԸ կողմից «KATANA KD 225» դիզելային գեներատորի փոխարեն ՀՀ ոստիկանությանը փաստացի մատակարարվել է «KATANA KD 250»

դիզելային գեներատոր, որը չի համապատասխանում մրցույթի հրավերի և կնքված պայմանագրով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

ՀՀ ոստիկանության և «Ուկռինվեստ» ՍՊԸ միջև կնքված պայմանգրերով կարգավորված չէ ծառայությունների մատուցման ընթացքում պետական սեփականություն հանդիսացող փոխարինված հին սարքերի, դետալների և նյութերի հանձնման ընդունման գործընթացը:

Սկսած 2012 թվականի ապրիլից մինչև 2018 թվականի հուլիսի 31-ը ՀՀ ոստիկանության ՃՈ Երևանի հաշվառման քննական բաժնում, զբաղեցնելով 15.4 քմ տարածք, առանց վարձակալության իրավական ձևակերպման գործել է «Արարատբանկ» ԲԲԸ մասնաճյուղ, որի դիմաց վճարումը կատարվել է 2018 թվականի օգոստոսի 3–ին: Բացի այդ, Երևան քաղաքի Գաջեգործների 76 հասցեում գտնվող հաշվառման քննական բաժնի վարչական շենքում, առանց որևէ իրավական ձևակերպումների, գործում է Երևանի քաղաքապետարանի գույքահարկի տեղեկատվական կենտրոնը, որը զբաղեցնում է 5.5 քմ տարածք:

Պետական սեփականություն հանդիսացող ՀՀ ոստիկանության ոչ բնակելի տարածքը վարձակալը հանձնել է ենթավարձակալության, որի մեկ ամսվա վարձավճարը գերազանցում է իր կողմից ՀՀ ոստիկանությանը վճարվող տարեկան վարձավճարի գումարը:

Վճարային տերմինալների և սուրճի սարքերի տեղադրման համար չորս պայմանագրեր ՀՀ ոստիկանության կողմից կնքվել են «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին անհամապատասխան, քանի որ օրենքի համաձայն՝ պետական գույքի կառավարման մարմինը պետական գույքի կառավարման կոմիտեն է, որն էլ իրականացնում է պետական գույքի վարձակալության ու անհատույց օգտագործման տրամադրումը:

Պահնորդական գործունեության նկատմամբ ստուգումների մեթոդաբանությունը, նկարագիրը և ստուգաթերթերը ՀՀ կառավարության որոշումներով հաստատված չեն, և առ հաշվեքննության պահը չեն կատարվում «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի պահանջները և լիցենզավորված մասնավոր թիկնապահական և պահնորդական կազմակերպությունների գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը:

I. ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 9-րդ վարչությունը, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները, համապատասխանության հաշվեքննություն է իրականացրել ՀՀ ոստիկանությունում 2018 և 2019 թվականներիի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը

ՀՀ ոստիկանության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ բյուջետային դասակարգումների և դրանց կիրառման ցուցումների համաձայն, ինչպես նաև ֆինանսատնտեսական գործունեությունը իրավական ակտերին, քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան իրականացնելու համար: ՀՀ ոստիկանության ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը իր կարծիքով, թույլ է տալիս պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Հաշվեքննողների պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Հաշվեքննությունն անցկացվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտներով: Հաշվեքննության ընթացքում անհրաժեշտ է հետևել վարքագծի սկզբունքների պահանջներին, և հաշվեքննությունը պլանավորել ու իրականացնել այնպես, որպեսզի ձեռք բերվի ողջամիտ երաշխիք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից և անհամապատասխանություններից զերծ լինելու վերաբերյալ:

Հաշվեքննության ընթացքում կատարվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և ֆինանսատնտեսական գործունեության մեջ էական անհապատասխանությունների ռիսկերի գնահատումը:

Եզրահանգում

Հաշվեքննության ընթացքում ձեռք են բերվել և արձանագրվել են բավարար ապացույցներ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետի դրույթին համապատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքը հիմնավորելու համար:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով 2018 և 2019 թվականների ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում ՀՀ ոստիկանությունը թույլ է տվել էական անհամապատասխանություններ, դրանց հետևանքները համատարած չեն և հաշվեքննության համապատասխանության տեսակի առումով տրվում է ոչ լիարժեք եզրահանգում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ՝

Դավիթ Չիբուխչյան

30.04.2021 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2018 և 2019 թվականներին ՀՀ ոստիկանությունը ըստ ներկայացված հաշվետվությունների հավաքագրել է համապատասխանաբար 7,177,221.8 հազ. դրամ և 9,747,653.6 հազ. դրամ բյուջետային եկամուտներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ ոստիկանության կողմից 2018 և 2019 թվականների առաջին կիսամյակում գանձված պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերի կատարողական

հազ. դրամ

Բյուջետային եկամուտների անվանում	2018 թվական		2019 թվական	
	ճշտված ծրագրային ցուցանիշ	ստացված եկամուտ	ճշտված ծրագրային ցուցանիշ	ստացված եկամուտ
Պետական տուրքեր	6,221,585.2	6,874,592.4	7,216,226.0	9,439,564.9
Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	20,056.9	58,045.6	38,727.5	39,621.3
Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների մուտքեր	165,049.0	202,887.3	159,000.0	239,031.1
ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից ուսման ծախսերի փոխհատուցման մուտքեր	20,000.0	39,837.3	25,000.0	25,836.1
Տոկոսավճարներ և շահաբաժիններ	-	1,859.2	-	3,600.2
Ընդամենը	6,426,691.1	7,177,221.8	7,438,953.5	9,747,653.6

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կողմից 2018 և 2019 թվականներին հավաքագրվել է նախատեսվածից համապատասխանաբար 750,530.7 և 2,308,700.1 հազ. դրամով ավելի եկամուտներ, որը հիմնականում պայմանավորված է ավտոմեքենայի պետհամարանիշ և վարորդական իրավունքի վկայական տալու համար պետական տուրքերից մուտքերի ավելացումով:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեի ծրագրերով ՀՀ ոստիկանության ծախսերի ճշտված պլանը կազմել է 44,017,313.3 հազ. դրամ, ֆինանսավորվել է 43,125,255.1 հազ. դրամ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ոստիկանության 2018 թվականի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից

հազ. դրամ

Ծրագիր, միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս
Հասարակական կարգի պահպանության ապահովում	36,907,179.1	36,467,712.7	36,452,076.4
ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանություն	3,669,157.7	3,658,159.6	3,658,159.6
ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն	744,897.7	723,392.6	723,392.6
Պետավտոհամարանիշների ձեռքբերում	236,230.0	236,226.5	236,226.5
ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	40,527.7	40,527.7	40,527.7
Բարձրագույն մասնագիտական կրթություն	873,396.6	727,830.6	727,830.6
Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	370,102.9	339,261.0	339,261.0
Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	233,871.6	205.540.9	205.540.9
Դեղորայքի տրամադրում ամբուլատոր պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց	68,863.5	60,818.0	60,818.0
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	873,086.5	871,326.4	871,313.5
Ընդամենը	44,017,313.3	43,125,255.1	43,109,605.9

2019 թվականին ՀՀ պետական բյուջեի ծրագրերի միջոցառումներով ՀՀ ոստիկանության ճշտված պլանը կազմել է 45,659,125.8 հազ. դրամ, ֆինանսավորվել է 44,299,587.4 հազ. դրամ (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ ոստիկանության 2019 թվականի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից

հազ. դրամ

Ծրագիր, միջոցառում	Հաշվետու ժամանակա-հատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս
Հասարակական անվտանգության ապահովում			

Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար	24,281,901.2	24,098,058.4	24,097,961.2
Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում	3,965,493.1	3,863,116.8	3,863,086.5
ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների բավարարում	7,758.0	7,758.0	7,758.0
ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	11,308.3	11,308.2	11,308.2
Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում			
Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում	1,450,035.8	1,449,186.3	1,449,186.3
Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքների անդամների առողջության պահպանում			
Առողջապահական ծառայությունների տրամադրում	896,030.7	889,414.2	889,414.2
Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց	68,863.5	59,857.7	59,857.7
Ոստիկանության կրթական ծառայություններ			
Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն	872,511.6	822,476.5	822,476.5
Միջին մասնագիտական կրթության ծառայություն	370,102.9	349,102.9	349,102.9
Նախնական մասնագիտական կրթության ծառայություն	233,871.6	221,866.2	221,866.2
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների մոնիտորինգ և վերահսկողություն			
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների մոնիտորինգի և վերահսկողության իրականացում	10,246,627.7	9,296,958.8	9,289,940.8
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում			
Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում	236,230.0	213,592.1	213,592.1
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում	3,018,391.4	3,016,891.3	3,016,891.3

Ընդամենը	**45,659,125.8**	**44,299,587.4**	**44,292,441.9**

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ կառավարության 26.01.2017 թ. թիվ 90-Ա որոշումով լուծարվել է ՀՀ ոստիկանության և «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ միջև 2011 թվականի հունիսի 13-ին կնքված՝ պետության կարիքների համար երթևեկության կանոնների նկատմամբ վերահսկողության համակարգերի ձեռքբերման (գնման) և դրանց սպասարկման ծառայությունների մատուցման թիվ ՀՀ ԿԱ Ո ՃՈ-ԱՊԾՁԲ-11/2 պայմանագիրը, և որպես պատճառված վնասի (բաց թողնված օգուտի) հատուցում ընկերությանը նախատեսվել է վճարել 2,500,000.0 հազ դրամ: ՀՀ կառավարության որոշումով թույլատրվել է ՀՀ ոստիկանությանը՝ ընկերությունից 2010 թվականին գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված 5-րդ մասի 1-ին կետի հիման վրա՝ բանակցային ընթացակարգով, առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու, կատարել ճանապարհային երթևեկության կանոնների պահպանման նկատմամբ տեխնիկական վերահսկողության համար նախատեսված ու ոստիկանության հաշվեկշռում գտնվող գույքի հավատարմագրային կառավարման աշխատանքների գնում: 2017 թվականի փետրվարի 15-ին ՀՀ ոստիկանության և «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ-ի միջև կնքված գույքի հավատարմագրային կառավարման թիվ ԲԸԱՀԾՁԲ-03/2017 պայմանագրի շրջանակներում (գործողության ժամկետը՝ 5 տարի) սահմանվում է, որ հատուցվում է հավատարմագրային կառավարման հանձնված համակարգերի կառավարման, շահագործման և տեխնիկական սպասարկման նպատակով փաստացի կատարված ծախսերը, իսկ վարձատրությունը կազմում է՝ ճանապարհային երթևեկության կանոնների պահպանման նկատմամբ տեխնիկական վերահսկողության համակարգերի միջոցով նշանակված տուգանքների փաստացի

գանձումների և նշված հատուցման գումարների տարբերության 10 տոկոսը՝ ներառյալ հարկերը, տուրքերը և այլ վճարները:

Պայմանագրի 2.1.4. և 2.2.11. կետերի համաձայն՝ մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 20-ը ՀՀ ոստիկանության հաստատմանն է ներկայացվում հաջորդ տարվա ծախսերի նախահաշվի նախագիծը, որը ՀՀ ոստիկանության կողմից քննարկվում և հաստատվում է հինգ աշխատանքային օրերի ընթացքում: 2018 թվականի ծախսերի նախահաշիվը հաստատվել է 10.01.2018 թ., որը դրանից հետո տարվա ընթացքում փոփոխվել է յոթ անգամ, իսկ 2019 թվականի ծախսերի նախահաշիվը հաստատվել է 05.03.2019 թ., որը դրանից հետո տարվա ընթացքում փոփոխվել է երկու անգամ: Փաստորեն, 2018 և 2019 թվականներին ծախսերի նախահաշիվները հաստատվել են պայմանագրով սահմանված ժամկետների խախտումներով: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «ՀՀ ոստիկանության և «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ Ընկերության միջև 2017 թվականի փետրվարի 15-ին կնքված գույքի հավատարմագրային կառավարման թիվ ԲԸԱՀԾՁԲ-03/2017 պայմանագրով սահմանվել է, որ հատուցման է ենթակա հավատարմագրային կառավարման հանձնված համակարգերի կառավարման, շահագործման և տեխնիկական սպասարկման ծախսերը: Նույն պայմանագրի 2.2.11 կետով սահմանվել է նախորդ ժամանակաշրջանի փաստացի ծախսերի, պլանավորվող տարում նախատեսվող աշխատանքների հիման վրա մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ը կազմել և ներկայացնել նախահաշվների նախագծեր, իսկ նախահաշվի նախագիծը կառավարման հիմնադրի կողմից պետք է քննարկվի և հաստատվի 5 աշխատանքային օրվա ընթացքում: Նույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 2-ով հաստատվել է նախահաշվի ձևանմուշ, որը ներառել է նախահաշվի տարեկան ցուցանիշներ, նախահաշվում կատարված փոփոխությունները (ավելացումը+, նվազեցումը-), նախահաշվով հաստատվող տարեկան ճշտված ցուցանիշներ՝ այդ թվում ըստ եռամսյակների: Այլ կերպ ասած, պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածը տալիս է այդպիսի (փոփոխության) հնարավորություն (ինչպես և*

ցանկացած որևէ այլ «Նախահաշվի» դեպքում) և քանի որ պայմանագրով սահմանված չէ նախահաշվի փոփոխության արգելք, ուստի այն իրավաչափ է և օրինական: Ինչ վերաբերվում է նախահաշիվների փոփոխությունների հիմնավորվածությանը, ապա դրանք կատարվում են ըստ անհրաժեշտության և որպես կանոն պայմանավորված են տարբեր օբյեկտիվ և նախապես անկանխատեսելի հանգամանքներով: Օրինակ, օրենսդրական փոփոխություններով, մասնավորապես՝ ՃԵԿ խախտումների վարչական տուգանքների սահմանված չափերի փոփոխությամբ, կամ բալային համակարգի ներդրման հետ կապված ծրագրային ապահովման լրամշակման և թարմացման լրացուցիչ ծառայությունների ձեռքբերմամբ, և այլն: Բացի այդ, տարվա ընթացքում նախահաշիվը փոփոխելու անհրաժեշտություն առաջացել է նաև այն պատճառով, որ հավատարմագրային կառավարման պայմանագրով սահմանված «ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ» նախահաշվային գումարը որպես այդպիսին կանխատեսածից ավելին կամ պակաս են եղել, ինչը պայմանավորված է ՃԵԿ վարչական ակտերով սահմանված տուգանքների փաստացի վճարված գումարների կանխատեսումներից ավելին կամ պակաս լինելու հանգամանքով և այլն»:

Ծախսերի նախահաշիվը բաղկացած է երկու բաժիններից՝ «Ա. Հավատարմագրային կառավարման հանձնված գույքի կառավարման, շահագործման և տեխնիկական սպասարկման ուղղակի ծախսեր» ու «Բ. Հավատարմագրային կառավարման հանձնված գույքի կառավարման, շահագործման և տեխնիկական սպասարկման անուղղակի (Հավատարմագրային կառավարչի վարչակառավարչական) ծախսեր»: 2018 թվականի հունվարի 10-ին հաստատված ծախսերի նախահաշվով նախատեսված է եղել 2,234,013.8 հազ. դրամի ծախս, իսկ փոփոխված և 2018 թվականի նոյեմբերի 11-ին վերջնական նախահաշվով ծախսը կազմել է 2,978,000.0 հազ. դրամ: 2019 թվականի մարտի 5-ին հաստված ծախսերի նախահաշվով նախատեսվել է 2,858,000.0 հազ. դրամի ծախս, իսկ 12019 թվականի դեկտեմբերի 10-ին վերջնական նախահաշվով

ծախսը կազմել է 3,337,543.2 հազ. դրամ: Փաստորեն, պայմանագրով չնախատեսված նախահաշվի փոփոխությունների արդյունքում տարվա կտրվածքով հատուցման ենթակա ծախսերը 2018 թվականին ավելացել են 743,986.2 հազ. դրամով, 2019 թվականին՝ 479,543.2 հազ. դրամով:

Պայմանագրի շրջանակներում 2018 թվականին ընկերությանը վճարվել է 2,387,542.7 հազ. դրամ ծախսերի փոխհատուցման գումար և 387,976.6 հազ դրամ վարձատրության գումար, 2019 թվականին վճարվել է համապասխանաբար՝ 3,195,767.3 հազ. դրամ և 665,258.2 հազ. դրամ: 2018 և 2019 թվականներին վճարված գումարների տարբերությունը պայմանավորվում է նրանով, որ 2018 թվականի շուրջ 540.0 մլն. դրամի ծախսերի փոխհատուցումը կատարվել է 2019 թվականին:

ՀՀ ոստիկանությունից ստացված «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ կողմից ՀՀ ՊԵԿ ներկայացված 2018 և 2019 թվականների «եկամտային հարկի և սոցիալական վճարի» հաշվարկի ամսական հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ «Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ» տողով «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ 2018 թվականին ներկայացրել է գումարային 1,214,220.3 հազ. դրամի հաշվետվություններ, 2019 թվականին՝ 1,285,474.2 հազ. դրամի հաշվետվություններ: Ըստ հաշվետվությունների, համապատասխանաբար՝ 8,189.0 հազ. դրամ և 9,631.4 հազ. դրամ ներկայացվել է որպես գործատուի միջոցներով վճարված նպաստների գումար: «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ կողմից 2018 և 2019 թվականներին, որպես եկամտային հարկից նվազեցվող նպաստների գումար ներկայացվել է համապատասխանաբար՝ գումարային 14,763.7 հազ. դրամ և 27,628.5 հազ. դրամ, կամ հատուցման ծախսերի հաշվին վճարման ենթակա աշխատավարձը՝ ըստ հաշվետվությունների, կազմել է համապատսխանաբար՝ 1,207,645.6 հազ. դրամ և 1,267,477.0 հազ. դրամ: Սակայն, գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի շրջանակում հանձնման ընդունման արձանագրություններով աշխատողների աշխատանքի վարձատրության համար 2018 թվականին «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ վճարել է

1,236,991.4 հազ. դրամ, 2019 թվականին՝ 1,291,685.4 հազ. դրամ, կամ 2018 թվականին վճարվել է հատուցման ենթակա գումարից 29,345.8 հազ. դրամ ավելի, իսկ 2019 թվականին, առանց հաշվի առնելու օգոստոս, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների աշխատավարձերի նվազեցումը, ավելի է վճարվել 44,788.1 հազ. դրամ (հավելված 1, 2): *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «Եկամտային հարկի և սոցիալական վճարի» հաշվարկի ամսական հաշվետվությունների հետ կապված մասով, հարկ ենք համարում նշել որ, 2018 և 2019 թվականներին «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հատուցման ենթակա ծախսերի հաշվետվությունում «Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ» տողով ընկերութունը 2018 թվականին ներկայացրել է 1.236.991,3 հազ. դրամի հաշվարկ, իսկ 2019 թվականին՝ 1.317.263,5 հազ. դրամի: Միևնույն ժամանակ նշված ժամանակահատվածի համար ՊԵԿ ներկայացված «Եկամտային հարկի և սոցիալական վճարի մասին» հաշվետվություններով ներկայացվել է՝ 2018 թվականին՝ 1.214.220,3 հազ. դրամի, 2019 թվականին՝ 1.285.474,2 հազ. դրամի հաշվարկներ: ՊԵԿ ներկայացված հաշվետվությունների և հատուցման ենթակա ծախսերի հաշվետվություններում առկա գումարների տարբերությունը կապված է ՊԵԿ ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգի հետ: Այսպես՝ ըստ սահմանված կարգի, հարկային հաշվետվության լրացման 1.6 սյունակում նշվել է հաշվետու ամսվա համար վարձու աշխատողին հաշվեգրված աշխատավարձը: Հաշվեգրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները չեն ներառել հաշվարկված նպաստները, իսկ աշխատակիցների արձակուրդները բաշխվել են ըստ արձակուրդի հաշվետու ամիսների: Այսինքն, ՊԵԿ ներկայացված յուրաքանչյուր ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարների մասին հաշվետվության 1.6 սյունակը ներառում է նախորդ և տվյալ ամսում հաշվարկված, բայց տվյալ ամսվան բաժին ընկնող արձակուրդայինի գումարները և միաժամանակ չի ներառում հետագա ամսվան բաժին ընկնող արձակուրդը, որը հաշվարկվել է տվյալ ամսում: Մասնավորապես, 2019 թվականի ընթացքում հաշվարկված նպաստների*

հանրագումարը կազմել է 37.259,8 հազ. դրամ, տարվա ընթացքում նախորդ ամսվա հաշվարկված, բայց տվյալ ամսվան բաժին ընկնող արձակուրդայինի գումարները կազմել է՝ 13.407,5 հազ. դրամ, իսկ հետագա ամսվան բաժին ընկնող արձակուրդային վճարը՝ 14.283,3 հազ. դրամ: ՊԵԿ ներկայացված՝ 2019 թվականին վերաբերող հաշվետվություններում «Ընդամենը» անվանումը կրող 1.17 սյունակում ներկայացվել է նաև «Դատարանի վճռի հիման վրա աշխատանքի վերականգնման դեպքում հարկադիր պարապուրդի վճարում», որի հանրագումարը 2019 թվականի արդյունքներով կազմել է 6.346,3 հազ. դրամ: 2019 թվականին ՃՈ ներկայացված հավատարմագրային կառավարման հանձնված համակարգերի կառավարման, շահագործման և տեխնիկական սպասարկման ծախսերի հաշվետվությունները համեմատելով ՀՀ ՊԵԿ ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարների մասին հաշվետվությունների հետ՝ պարզվել է, որ ՀՀ ՃՈ ներկայացված եկամտային հարկից նվազեցվող նպաստների ընդհանուր գումարը կազմել է 27.628,5 հազ. դրամ՝ արձանագրությունում նշված 44,788.1 հազ. դրամի փոխարեն, իսկ 2018 թվականի համար՝ եկամտային հարկից նվազեցվող նպաստների ընդհանուր գումարը կազմել է 14.763,6 հազ. դրամ՝ արձանագրությունում նշված 29,345.8 հազ. դրամի փոխարեն: Ընդ որում, տվյալ խնդիրը հավատարմագրային կառավարչի կողմից հայտնաբերվել է դեռևս 2020 թվականի հունիս ամսին, երբ ներդրվել է /ՀԾ-Ձեռնարկություն/ ծրագիրը, և 2020 թվականի հուլիս ամսից առ այսօր եկամտային հարկից նվազեցվող նպաստների գումար չի ներկայացվել ՃՈ-ին: Միաժամանակ հարկ է նշել, որ 2021 թվականի ապրիլի 20-ին, շահութահարկի հաշվարկի ներկայացմամբ պայմանավորված, կատարվել է 2020 թվականի ֆինանսական տարվա ամփոփում, որի արդյունքներով նշանակվել է ծառայողական քննություն և արդյունքում ավելի հատուցված գումարները կփոխհատուցվեն առաջիկա վճարումների հաշվին, որի մասին կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն»:

Հաշվի առնելով ՀՀ ոստիկանության պարզաբանումը, եզրակացությունում պարբերության վերջին նախադասությունը խմբագրվել է հետևյալ ձևակերպմամբ՝ «Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի շրջանակում հանձնման ընդունման արձանագրություններով աշխատողների աշխատանքի վարձատրության համար 2018 թվականին «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ վճարվել է 1,236,991.4 հազ. դրամ, 2019 թվականին՝ 1,291,685.4 հազ. դրամ, տարբերությունը՝ 29,345.8 հազ. դրամ և 44,788.1 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ, 2018 և 2019 թվականներին «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ վճարվել է հատուցման ենթակա գումարից ավելի համապատասխանաբար՝ առնվազն 14,763.7 հազ. դրամ և 27,628.5 հազ. դրամ (հավելված 1, 2)»:

2019 թվականի վերջնական նախահաշվով «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ վարչական ապարատի աշխատողների վարձատրության համար նախատեսվել և վճարվել է 104,762.2 հազ. դրամ, սակայն ըստ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ 2019 թվականի ընթացքում յուրաքանչյուր ամիս հաստատված հաստիքացուցակների՝ վարչական ապարատի աշխատողների վարձատրության չափը կազմել է 84,954.4 հազ. դրամ: Փաստորեն, 2019 թվականին «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ-ին վարչական ապարատի աշխատողների վարձատրության համար ընկերությանը վճարվել է հաստիքացուցակներով սահմանված աշխատավարձի ֆոնդից 19,807.8 հազ. դրամ ավելի գումար:

Հարկ է նշել, որ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ վարչական ապարատի աշխատողների աշխատավարձերը ներառված են հատուցման ենթակա հավատարմագրային կառավարման հանձնված համակարգերի կառավարման, շահագործման և տեխնիկական սպասարկման նպատակով կատարվող ծախսերում: 2019 թվականի մայիս ամսից սահմանվել է տնօրենի հաստիք՝ 2,040.0 հազ. դրամ աշխատավարձով, անվտանգության գծով տնօրենի տեղակալի հաստիք՝ 860.0 հազ. դրամ աշխատավարձով, տնօրենի խորհրդականի հաստիք՝ 965.0 հազ. դրամ աշխատավարձով, անձնակազմի կառավարման բաժնի պետի հաստիք՝ 450.0 հազ. դրամ աշխատավարձով: Բացի այդ, տարվա ընթացքում

հաստիքացուցակով սահմանվել է տնօրենի օգնական (մինչև չորս հաստիք), որի ամսական աշխատավարձը կազմել է 286.1 հազ. դրամից մինչև 606.1 հազ. դրամ: Ընդ որում, ընկերության վարչական ապարատի աշխատողների աշխատավարձի ֆոնդի ավելացումները և բարձր աշխատավարձերի վճարումը ամբողջությամբ կատարվել են պետական միջոցներից ճանապարհային ոստիկանության կողմից հատուցվող ծախսերի հաշվին, իսկ պայմանագրով ընկերության համար սահմանված 10% վարձատրության հաշվին (տարեկան 400.0 մլն դրամից ավելի գումար) աշխատողների աշխատավարձի համար միջոցներ չեն ծախսվել: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «Վարչական աշխատողների աշխատավարձերի» մասով հարկ է նշել, որ 2019 թվականի վերջնական նախահաշվով վարչական ապարատի աշխատակիցների համար սահմանված վարձատրության չափը կազմել է 104,762.2 հազ. դրամ: Նշված ժամանակահատվածի համար՝ համաձայն հավատարմագրային կառավարման ծախսերի հատուցման հաշվետվությունների, ներկայացվել և որպես հատուցում է ստացվել 104,170,5 հազ. դրամ, որը չի գերազանցել նախահաշվով սահմանված ցուցանիշը: «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ՀՀ ՃՈ ամսական կտրվածքով պայմանականորեն «հաստիքացուցակ» անվանումը կրող օժանդակ, աշխատանքային «էքսել» ֆայլերը նույնական չեն ընկերության հիմնադիր ժողովի կողմից հաստատված ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ հետ: Հաշվեքննության արդյունքների վերաբերյալ թիվ 5 արձանագրության մեջ տեղ գտած, որպես վարչական ապարատի աշխատողների վարձատրության չափ հանդիսացող՝ 84,954.4 հազ. դրամը (հավանաբար վերցված օժանդակ, աշխատանքային էքսել ֆայլից) չի համապատասխանում իրականությանը, քանի որ ընկերության հաստիքացուցակը կազմվել և հաստատվել է 2019 թվականի մարտ ամսին՝ հիմնադիր ժողովի կողմից: Ըստ 25.03.2019 թվականի հաստատված հաստիքացուցակի նախատեսված է եղել տնօրենի օգնականի 3 հաստիք՝ յուրաքանչյուրը 495.0 հազ. դրամ աշխատավարձով, որոնցից մեկը թափուր է մնացել նույն թվականի մայիսի 8-ից, իսկ մյուսը՝ նույն թվականի օգոստոսի 20-ից:*

Այսինքն, տնօրենի օգնականի հաստիքը 2019 թվականի օգոստոսի 20-ից մինչ օրս փաստացի զբաղեցրել է մեկ անձ՝ նշված աշխատավարձի չափով: Իսկ պայմանականորեն «03.19 հաստիքացուցակ» անվանումը կրող օժանդակ աշխատանքային էքսել ֆայլում ներկայացված տվյալներում «տնօրենի օգնական» անվանումը կրող սյունակում, հաստիքների թվաքանակը նշված է եղել /չորս/, քանի որ այն իրենից ընդամենը ներկայացրել է տվյալ ամսում տնօրենի օգնականի հաստիքից ազատված և տվյալ հաստիքում նոր նշանակված այլ անձանց քանակի ընդհանրական տվյալները: Ինչ վերաբերվում է արձանագրությամբ նշված 606.1 հազ. դրամ կազմող տնօրենի օգնականի աշխատավարձի չափին, ապա այն պայմանավորված է եղել ազատված աշխատակիցներին աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների տրամադրմամբ, այսինքն չէր կարող լինել տնօրենի օգնականի հաստիքի այդպիսի դրույքաչափ, քանի որ առավելագույն դրույքաչափը եղել է 495.0 հազ. դրամ, որը մինչ օրս անփոփոխ է: Այսպիսով տնօրենի օգնական է հանդիսացել մեկ անձ, նույն անփոփոխ՝ 495.0 հազ. դրամ դրույքաչափով: Անձնակազմի կառավարման բաժնի պետի հաստիքի դրույքաչափը 25.03.2019 թվականի հաստիքացուցակով սահմանվել է 540.0 հազ. դրամ, սակայն տվյալ հաստիքը 27.03.2019թ.-ից զբաղեցնող անձի աշխատավարձը սահմանվել է 450.0 հազ. դրամ, և այն մինչ այժմ չի գերազանցել հաստիքացուցակով սահմանված վարձատրության չափը, իսկ նույնանուն հաստիքը, որի դրույքաչափը եղել է 567.0 հազ. դրամ, թափուր է մնացել 2018 թվականի սեպտեմբեր ամսից: Բացի այդ, 25.03.2019 թվականի հաստիքացուցակով նախատեսված է եղել տնօրենի խորհրդականի երկու հաստիքային միավոր՝ 965.0 հազ. դրամ աշխատավարձի չափով, սակայն այդ պահից մինչ այժմ զբաղեցված է միայն մեկ հաստիք՝ վարձատրության նշված չափով: Ըստ 25.03.2019 թվականի հաստիքացուցակի՝ տնօրենի վարձատրության չափը կարգավորվել է կողմերի միջև կնքված պայմանագրով, որի գինը կնքման պահից մինչ այժմ փոփոխության չի ենթարկվել: 2019 թվականի վերջնական նախահաշվով և նույն ժամանակահատվածի համար ներկայացված հավատարմագրային գույքի կառավարման, շահագործման

տեխնիկական սպասարկման ծախսերի հաշվետվություններով վարչական ապարատի աշխատողների աշխատավարձի փոփոխությունը ընդհանուր աշխատավարձի ֆոնդի մեջ կազմել է 3.6%-ից /2019 թվականի հունվար/ 7.3% /2019 թվականի դեկտեմբեր/՝ պայմանավորված կառուցվածքային փոփոխությամբ, իսկ ընդհանուր ծախսերի հատուցման մեջ աշխատավարձի ֆոնդի փոփոխությունը կազմել է 1%՝ /2019 թվականի հունվար/ 47.8%-ից դառնալով 48.8% (2019թվականի դեկտեմբեր)»:

Բացի այդ, «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ ծառայությունների մատուցման համար 2018 թվականի սեպտեմբերի 1-ին կնքել է ամսական 2,419.0 հազ. դրամ արժեքով պայմանագիր «Դետեկտոր» ՍՊԸ հետ, որը գրանցվել է 2018 թվականի օգոստոսի 29-ին: Պայմանագրով «Դետեկտոր» ՍՊԸ պարտավորվել է իրականացնել «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ հաշվապահական հաշվառման վարում, հարկային, վիճակագրական և այլ պարտադիր հաշվետվույունների պատրաստում, որպես պատվիրատուի լիազոր անձ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում անհրաժեշտ հաշվետվությունների ստորագրում և հանձնում, էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի և գրքերի կառավարման համակարգում (E-invoicing) ստացված և դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի ստորագրում: Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ 2019 թվականի հունվար, փետրվար, մարտ ամիսներին վճարել է «Դետեկտոր» ՍՊԸ ամսական 2,419.0 հազ. դրամ, ապրիլ ամսին՝ 1,773.9 հազ. դրամ: Սակայն, նույն ժամանակահատվածում «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ հաստիքացուցակների և աշխատավարձի ցուցակների համաձայն՝ ընկերությունում աշխատել է հաշվապահ, որին հունվար, փետրվար, մարտ ամիսներին վճարվել է ամսական 423.0 հազ. դրամ, ապրիլ ամսին՝ 1,206.5 հազ. դրամ, կամ ընդամենը վճարվել է 2,475.5 հազ. դրամ: Փաստորեն, չի հիմնավորվում այդ ժամանակահատվածում «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ հաշվապահի հաստիքը և հաշվապահին աշխատավարձի վճարումը, քանի որ կնքված պայմանագրի շրջանակում հաշվապահական ծառայությունները պարտավորվել էր մատուցել

«Դետեկտոր» ՍՊԸ: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «Արձանագրությունում տեղ գտած, «Սեքյուրիթի Դրիմ» և «Դետեկտոր» ՍՊ ընկերությունների միջև կնքված պայմանագրի մասով հարկ է նշել, որ 2018 թ. օգոստոս ամսին լուծվել են «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության գլխավոր հաշվապահի և ավագ հաշվապահի աշխատանքային պայմանգրերը, համապատասխանաբար՝ 1,919,0 հազ. դրամ և 500,0 հազ. դրամ հաստիքով, ընդամենը 2,419,0 հազ. դրամ և նույն գումարով 01.09.2018 թ. կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն սահմանվել է, որ ծառայություններ մատուցող ընկերությունը իրականացնում է «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության հաշվապահական հաշվառման վարում, հարկային, վիճակագրական և այլ պարտադիր հաշվետվությունների պատրաստում, որպես «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության լիազոր անձ ՊԵԿ էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի կառավարման համակարգում (E-invoicing) ստացված և դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի ստորագրում, իսկ կողմերի միջև պայմանագիրը լուծվել է 23.04.2019թ.: Ինչ վերաբերվում է ընկերությունում 2018 թվականի սեպտեմբեր ամսից մինչև 2019 թվականի ապրիլ ամիսը հաշվապահի հաստիքով /423,0 հազ. դրամ / աշխատող աշխատակցին, ապա նա հանդիսացել է կապող օղակ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության տարբեր ստորաբաժանումների և հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերության միջև, իրականացրել է աշխատակիցների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի /տաբել/ ստուգում, վերջինների համապատասխանությունը արձակուրդների, հիվանդաթերթիկների, աշխատակիցների ստորաբաժանումների փոփոխության ու ազատման հրամաններին և իրականացրել է դրանց տրամադրում հաշվապահական ստորաբաժանմանը, որը ըստ էության համապատասխանել է նաև անձնակազմի կառավարման / կադրերի բաժնի / գործառույթներին, ինչը սահմանված չի եղել «Դետեկտոր» ընկերության հետ կնքած պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման շրջանակով: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ*

ինչպես մինչև 2018թ. սեպտեմբերի 1-ը /հաշվապահական ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը/ հաշվապահական սպորաբաժանման աշխատավարձի ֆոնդը կազմել է ամսական 2,842,0 հազ. դրամ, այնպես էլ 2018թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2019թ. ապրիլի 23-ը /հաշվապահական ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության ընթացքում /հաշվապահական ծառայությունների մատուցման ամսական գումարի 2,419,0 հազ. դրամ և հաշվապահի ամսական 423,0 հազ. դրամ աշխատավարձի հանրագումարը, կազմել է նույն 2,842,0 հազ. դրամ գումարը, այսինքն միևնույն գործառույթների համար «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ կողմից Ճանապարհային ոստիկանությունից հավելյալ գումար չի պահանջվել: Հարկ է նշել, որ 2019 թվականի ապրիլի 23-ին կրճատվել է նշված հաշվապահի հաստիքը իսկ քննարկվող ժամանակահատվածում «Սեքյուրիթի Դրիմ» ընկերությունը չի ունեցել անձնակազմի կառավարման բաժին»:

Տարեկան վերջնական նախահաշիվների «տեխնիկական սպասարկման ծառայություններ» տողով 2018 և 2019 թվականներին նախատեսվել է համապատասխանաբար՝ 717,317.9 հազ. դրամ և 1,087,919.3 հազ. դրամ: Նշված ծառայությունների գնման համար «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ մրցութային ձևով 2018 թվականի հունվարի 31-ին կնքել է պայմանագիր «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ հետ: «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ ներկայացրել է 725,176.0 հազ. դրամի (առանց ԱԱՀ) գնային առաջարկ, որը պակասեցվել է և պայմանագրի արժեքը տարեկան կտրվածքով կազմել է 690,024.0 հազ. դրամ (առանց ԱԱՀ), կամ ամսական՝ 57,502.0 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ գնային առաջարկը: Գնային առաջարկի բաղադրիչներն են՝

- Մեկ արագաչափի տարեկան սպասարկման արժեքը՝ 1,296.0 հազ. դրամ, 183 հատի համար՝ 237,168.0 հազ. դրամ,
- 136 հատ խաչմերուկներում տեղադրված տեսադիտարկման խցիկների սպասարկում՝ տարեկան 376,008.0 հազ. դրամ, որից 141,000.0 հազ. դրամը

համադրված 141 տպասալիկների տարեկան ծրագրային ապահովման (հեղինակային իրավունքի օբյեկտ) «լիցենզիաների» արժեքը,

- «Էլլիպս Ջի Էյ» ընկերության կողմից սպասարկվող Երևան քաղաքի Իսակովի 9, Զ. Քանաքեռցու և Ն. Տիգրանյան 27 հասցեներում տեղակայված խախտումների արձանագրման կենտրոններում առկա գույքի և համակարգերի՝ այդ թվում՝ տեսահսկման, օդափոխության, հակահրդեհային ահազանգման, ջրամատակարարման, ջրահեռացման, ջեռուցման, էլ. սնուցման, անցումային և այլ համակարգերի, համակարգչային ցանցերի, սերվերների, համակարգիչների, համակարգչային համալրող սարքերի, հիշողության սարքերի և այլ սարքավորումների կարգաբերման, թեսթավորման, շահագործման և վերոնշյալ սարքերի սարքավորումների անխափան աշխատանքի ապահովմանն ուղղված տեխնիկական այլ միջոցառումների համար տարեկան 112,000.0 հազ. դրամ:

Կնքված պայմանագրի գործողության ժամկետը սահմանված էր մինչև 15.02.2022թ., սակայն 26.04.2019թ. «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ հետ կնքվել է նոր պայմանագիր՝ 552,005.5 հազ. դրամ արժեքով, որում ներառված է ԱԱՀ: Պայմանագրի գնման ժամանակացույցով ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել է 2019 թվականի մայիսից մինչև դեկտեմբեր ամիսը ներառյալ ժամանակահատվածը: Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է երեք բաղադրիչ՝

1. Թվով առկա 183 արագաչափ սարքերի ամենօրյա (24 ժամյա ժամանակաչափով սպասարկումը) տեխնիկական սպասարկումը և անխափան աշխատանքի ապահովումը,
2. Երևան քաղաքում տեսադիտարկման համակարգով կահավորված թվով շուրջ 142 խաչմերուկների սպասարկման ենթակա շուրջ 750 տեսախցիկների ամենօրյա (24 ժամյա ժամանակաչափով սպասարկումը) տեխնիկական սպասարկումը և անխափան աշխատանքի ապահովումը,

3. Երևան քաղաքում թվով 3 (երեք) հասցեներում գտնվող սերվերների (24 ժամյա ժամանակաչափով) ամենօրյա տեխնիկական սպասարկումը և անխափան աշխատանքի ապահովումը:

2019 թվականի պայմանագրի տեխնիկական բնութագրում ներկայացված չէ յուրաքանչյուր բաղադրիչով մատուցման ենթակա ծառայությունների արժեքը: Պայմանագրի գինը սահմանվել է նախորդ պայմանագրով ծառայությունների մատուցման ամսական արժեքին համապատասխան՝ 57,502.0 հազ. դրամ (առանց ԱԱՀ), կամ պայմանագրի գործողության ութ ամիսների համար պայմանագրի գինը առանց ԱԱՀ կազմում է 460,016.0 հազ. դրամ: Սակայն, տվյալ պայմանագրի տեխնիկական բնութագրի 2 բաղադրիչում ներառված չէ 141 տպասալիկների տարեկան ծրագրային ապահովման «լիցենզիաների» արժեքը, որը նախորդ պայմանագրով ամսական կտրվածքով կազմում էր 11,750.0 հազ. դրամ (առանց ԱԱՀ): Հետևաբար, 2019 թվականին կնքված պայմանագրի գինը ամսական կտրվածքով կկազմեր 45,752.0 հազ. դրամ, իսկ ութ ամիսների համար՝ 366,016.0 հազ. դրամ (առանց ԱԱՀ): Փաստորեն, 2019 թվականի ութ ամիսների համար ծառայությունների մատուցման արժեքը, ներառյալ՝ ԱԱՀ, կկազմեր 439,219.2 հազ. դրամ կամ պայմանագրով սահմանված 552,005.5 հազ. դրամ գնից՝ 112,786.3 հազ. դրամ պակաս:

Ընդ որում, ըստ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ իրեն պատկանող հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող 141 տպասալիկները նախատեսված ծառայությունների մատուցման շրջանակներում օգտագործվում են հենց նույն «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ կողմից, և հետևաբար, չի հիմնավորվում այդ տպասալիկների ծրագրային ապահովման «լիցենզիաների» արժեքի վճարումը պատվիրատուի՝ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ կողմից, որը փաստացի կազմում է տարեկան 141,000.0 հազ. դրամ (ըստ գնահաշվարկի՝ յուրաքանչյուր տպասալիկի «լիցենզիան»՝ 1,000.0 հազ. դրամ): Հարկ է նշել նաև, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության պաշտոնական կայքում «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ անունով որպես հեղինակային իրավունքի օբյեկտ գրանցված է միայն «ELLIPS»

ապրանքային նշանը և չի հիմնավորվում տպասալիկների հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսանալը:

Բացի այդ, հաշվարկային տվյալների բացակայության պատճառով հնարավոր չէ գնահատել տեխնիկական բնութագրի 3-րդ բաղադրիչով՝ Երևան քաղաքում երեք սերվերների ամենօրյա տեխնիկական սպասարկման և անխափան աշխատանքի համար պայմանագրերով նախատեսված տարեկան 112,000.0 հազ. դրամ ծախսի չափի հիմնավորումը: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «Ինչ վերաբերում է «Սեքյուրիթի Դրիմ» և «Էլլիպս Ջի Էյ» ՍՊ ընկերությունների միջև կնքված ծառայությունների գնման պայմանագրերին, ապա հարկ է նշել, որ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության և «Էլլիպս Ջի Էյ» ՍՊ ընկերության միջև 31.01.2018թ. կնքված ծառայությունների գնման պայմանագիրը 2019 թվականին լուծվել է, հաշվի առնելով ընկերությունների նկատմամբ դեռևս 2018 թվականին հարուցված և քննվող քրեական գործի հանգամանքները, ինչպես նաև «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության նախկին տնօրեն Արամ Ղլեչյանի կողմից կատարված այն հայտարարությունները, որ ծառայությունների մատուցումը իրականացվել է ոչ ամբողջական ծավալով: Միաժամանակ հաշվի է առնվել այն հանգամանքը, որ պետք է բարձրացվեր և արդյունավետ դարձվեր մատուցվող ծառայությունների որակը՝ ձևաչափում որոշակի փոփոխությունների իրականացմամբ (ծառայություն իրականացնող ընկերության նկատմամբ տույժերի կիրառում): Այդ իսկ պատճառով հայտարարվել է նոր մրցույթ, որին մասնակցել են երեք տարբեր կամակերպություններ՝ (1) <<Լոկատոր>> ՍՊԸ, (2) <<Սեկոնետ>> ՍՊԸ, (3) <<Էլլիպս Ջի Էյ>> ՍՊԸ: Մրցույթը շահել է <<Էլլիպս Ջի Էյ>> ՍՊ ընկերությունը: Ինչ վերաբերվում է այն դիտարկմանը, որ մինչև 183 արագաչափ սարքերի ամենօրյա /24 ժամյա ժամանակաչափով սպասարկումը/, տեխնիկական սպասարկումը և անխափան աշխատանքի ապահովումը, Երևան քաղաքում տեսադիտարկման համակարգով կահավորված թվով շուրջ 142 խաչմերուկների սպասարկման ենթակա շուրջ 750 տեսախցիկների ամենօրյա /24 ժամյա ժամանակաչափով*

սպասարկումը/ տեխնիկական սպասարկումը և անխափան աշխատանքի ապահովումը, Երևան քաղաքում թվով 3 հասցեներում գտնվող սերվերների /24 ժամյա ժամանակաչափով/ ամենօրյա տեխնիկական սպասարկումը և անխափան աշխատանքի ապահովումը, 2019 թվականի պայմանագրի տեխնիկական բնութագրում յուրաքանչյուր բաղադրիչով մատուցման ենթակա ծառայությունների արժեքների ներկայացված չլինելու հանգամանքին, ապա հայտնում ենք, որ ծառայությունների գնման մրցույթը հայտարարվել է մեկ չափաբաժնով, նկատի ունենալով, որ դրանք որպես մեկ ամբողջություն տեխնիկապես փոխկապակցված են: Հատկանշական է, որ 2019 թվականի պայմանագրից հետո «Էլլիպս Ջի Էյ» ՍՊ ընկերության կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման կամ թերացման համար կիրառվել և ներկայումս էլ շարունակում են կիրառվել տույժեր: Մասնավորապես՝ 2019 թվականի ընթացքում տույժ է կիրառվել 15.035.187 դրամի չափով, 2020 թվականի ընթացքում՝ 1.996.020 դրամի չափով և այլն: 2020թ. փետրվար ամսից ընկերությունների միջև կնքվել է համաձայնագիր և <<Էլլիպս Ջի Էյ>> ՍՊ ընկերության կողմից, ի հաշիվ հիմնադիրների շահաբաժինների, նվազեցվել է ծառայությունների մատուցման ամսական գումարը 12 մլն. դրամի չափով: Ինչ վերաբերվում է տպասալերի համար գումարների հատկացմանը, ինչպես նաև տպասալերի հեղինակային իրավունքի գրանցմանը, ապա պետք է նշել, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում դեռևս 2018 թվականից հարուցվել և քննվում է թիվ 58154618 քրեական գործը, և նշված տպասալերը հանդիսանում են այդ քրեական գործով քննության առարկա: Մեր տեղեկություններով տպասալերին վերաբերող հանգամանքների պարզման ուղղությամբ իրականացվել են քննչական և դատավարական գործողություններ: Արդյունքների մասին կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն»:

«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ ծառայությունների վճարովի մատուցման 17.05.2017թ. պայմանագրի շրջանակում հանձման ընդունման ակտերի հիման վրա 2018 և 2019 թվականներին վճարել է «ԱյԹի Էքսպերտիզա» ՍՊԸ

համապատասխանաբար՝ 65,311.3 հազ. դրամ և 15,325.0 հազ. դրամ: Ըստ հանձման ընդունման ակտերի՝ «ԱյԹի Էքսպերտիզա» ՍՊԸ կատարել է սարքերի, սարավորումների վերանորոգում, այդ թվում, արագաչափ սարքերի վերանորոգում՝ 1 հատը 1,050.0 հազ. դրամից մինչև 2,565.0 հազ. դրամ արժեքով, արագաչափի ալեհավաքի վերանորոգում՝ 1 հատը 860.0 հազ. դրամից մինչև 920.0 հազ. դրամ արժեքով, արագաչափի տեսախցիկի վերանորոգում՝ 1 հատը 280.0 հազ. դրամ արժեքով: Բացի այդ, պայմանագրի շրջանակում «ԱյԹի Էքսպերտիզա» ՍՊԸ 2018 թվականին կատարել է 164 արագաչափ սարքի ծրագրային թարմացում՝ 1 հատը՝ 35.0 հազ. դրամով (ընդամենը՝ 5,740.0 հազ. դրամ): Սակայն, «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ և «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ միջև 2018 թվականի հունվարի 31-ին և 2019 թվականի ապրիլի 4-ին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակներում արագաչափ սարքերի ծրագրային թարմացումը, ի թիվս մատուցվող այլ ծառայությունների, կատարում է «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ: Հետևաբար, չի հիմնավորվում 2018 թվականի «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ կողմից արագաչափ սարքերի ծրագրային թարմացման համար 5,740.0 հազ. դրամի վճարումը «ԱյԹի Էքսպերտիզա» ՍՊԸ:

Բացի այդ, «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ կնքել է «ԱյԹի Էքսպերտիզա» ՍՊԸ հետ ծառայությունների վճարովի մատուցման 21.02.2018թ. պայմանագիր, որի շրջանակում 23.04.2018թ. հանձման ընդունման ակտի հիման վրա «ԱյԹի Էքսպերտիզա» ՍՊԸ վճարվել է 15,800.0 հազ. դրամ՝ ծրագրային ապահովման համար: Հանձման ընդունման ակտում նշված չէ՝ ինչի համար է նախատեսված այդ ծրագրային ապահովումը: Արդյունքում, հնարավոր չէ գնահատել պետության կարիքների համար գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի շրջանակում «ԱյԹի Էքսպերտիզա» ՍՊԸ այդ գումարի վճարման հիմնավորվածությունը:

Հարկ է նշել, որ «ԱյԹի Էքսպերտիզա» ՍՊԸ գրանցվել է 2017 թվականի մայիսի 10-ին («Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ հետ պայմանագիր կնքելուց 7 օր առաջ), չի հանդիսանում ԱԱՀ վճարող: Ընդ որում, ՀՀ ՊԵԿ ներկայացված «եկամտային

հարկի և սոցիալական վճարների» հաշվարկների՝ «ԱյԹի Էքսպերտիզա» ՍՊԸ 2018 և 2019 թվականների ընթացքում ունեցել է մեկ կամ երկու աշխատող՝ 78.0 հազ. դրամ ամսական աշխատավարձով: Ընդհանուր առմամբ, «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ 2018 և 2019 թվականներին «ԱյԹի Էքսպերտիզա» ՍՊԸ փոխանցել է համապատասխանաբար՝ 106,648.3 հազ. դրամ և 17,775.0 հազ. դրամ: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «Արձանագրությունում նշված «Այ Թի Էքսպերտիզա» ՍՊ ընկերության հետ կապված պետք է նշել, որ «Այ Թի Էքսպերտիզա» ՍՊ Ընկերությունը արագաչափ սարքերի ծրագրային ապահովման թարմացման համար ներկայացրել է թվով երկու հաշվարկային փաստաթուղթ ՝ 2018թ. ապրիլ և հոկտեմբեր ամիսներին ՝ 1,575,0 հազ. դրամ և 4,225,0 հազ. դրամ արժեքով, որից 60.0 հազ. դրամը երեք մայր սալիկների վերանորոգման համար: «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ Ընկերության կողմից հավատարմագրային կառավարման իրականացման 2018 թվականի հոկտեմբեր ամսվա հատուցման ենթակա ծախսերի հաշվետվության Ա3.3 «Սարքերի, սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայություններ» հոդվածում 4.225.0 հազ. դրամը ընդգրկված չէ և չի հատուցվել ՃՈ կողմից, իսկ ապրիլ ամսվա հատուցման ենթակա ծախսերի հաշվետվության Ա3.3 «Սարքերի, սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայություններ» հոդվածում 1,575,0 հազ. դրամ գումարը ներառվել է, սակայն, քանի որ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության և «Էլլիպս Ջիէյ» ՍՊ Ընկերության միջև գործող պրոֆտեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն արագաչափ սարքերի ծրագրային ապահովման թարմացման աշխատանքները իրականացվել են «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ կողմից, այդ իսկ պատճառով «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերությունը դատական հայց է ներկայացրել «ԱՅ ԹԻ Էսպերտիզա» ՍՊ ընկերության դեմ: Ըստ այդմ արագաչափ սարքերի ծրագրային թարմացման համար ՃՈ միջոցներից որպես ծախսերի հատուցում վճարվել է 1.575,0 հազ. դրամ, արձանագրված՝ 5.740,0 հազ. դրամի փոխարեն: Բացի այդ, «ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԴՐԻՄ» ՍՊ Ընկերությունը*

23.04.2018 թ. «ԱՅԹԻ ԷՔՍՊԵՐՏԻԶԱ» ՍՊ Ընկերությունից հարկային հաշիվների ներկայացման էլեկտրոնային համակարգով ստացել է 15.800.0 հազ. դրամի հաշիվ («ՈՒինդոուզ 7» / Windows 7/ օպերացիոն համակարգերի թվով 150 հատ արտոնագիր): Հայտնում ենք, որ հաշվեքննիչ արձանագրության մեջ նշած 15.800.0 հազ. դրամը չի ներառվել գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով սահմանված հավատարմագրային կառավարման իրականացման հատուցման ենթակա ծախսերում: Ընդհանուր առմամբ 2019 թվականի ընթացքում «ԱՅ ԹԻ Էսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից «Սեքյուրիթի Դրիմ» ընկերությանը ներկայացվել է 17.775,0 հազ. դրամի հաշվարկային փաստաթուղթ, որից սակայն 8,450.0 հազ. դրամը ՃՈ հատուցման հաշվետվություններով չի պահանջվել, իսկ 2018 թվականի ընթացում ներկայացվել է 106,648.3 հազ. դրամ, որից 37,537.0 հազ. դրամը ՃՈ հատուցման հաշվետվություններով նույնպես չի պահանջվել: Այսինքն, արձանագրությամբ նշված 2019 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում փոխանցված 17.775.0 հազ. դրամի փոխարեն ՃՈ-ից պահնանջվել և փոխհատուցվել է 9.325.0 հազ. դրամ, իսկ 2018 թվականի ընթացքում արձանագրությամբ նշված 106.648.3 հազ. դրամի փոխարեն ՃՈ-ն հատուցել և փոխանցել է 69.111.3 հազ. դրամ: Հարկ է նշել, որ 2020 թվականի ընթացքում «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության կողմից ՃՈ-ին ներկայացվել է «ԱՅ ԹԻ Էսպերտիզա» ՍՊ ընկերության հետ առնչվող ճշգրտված ծախսերի հատուցման հաշվետվություններ, որով պակասեցվել է նախկինում ներկայացված հատուցման ծախսերը՝ 18.000.0 հազ. դրամի չափով և միաժամանակ նույն չափի գումարի հայցապահանջով «Սեքյուրիթի Դրիմ» ընկերությունը դիմել է դատարան՝ «ԱՅ ԹԻ Էսպերտիզա» ՍՊ ընկերության դեմ: «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերությունը նաև 22.04.2019թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ պատասխանող «Այ Թի Էքսպերտիզա» ՍՊ ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, որը Դատարանի կողմից վարույթ է ընդունվել և ներկայումս գտնվում է դատաքննության փուլում և մինչ վերոհիշյալ հայցադիմում ներկայացնելը՝ 12.03.2019թ-ին «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ

ընկերության տնօրեն Ա.Պողոսյանի կողմից լուծվել է «Այ Թի Էքսպերտիզա» ՍՊ ընկերության հետ նախկինում կնքված պայմանագրերը, քանի որ նույն գործառույթը կատարվել է «Էլլիպս ՋԻ ԷՅ» ՍՊ ընկերության կողմից: Բացի այդ, «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության կողմից հանցագործության մասին հաղորդումներ են ներկայացվել այն մասին, որ վերը հիշատակված «Windows 7» օպերացիոն համակարգերի ձեռքբերման գործընթացը իրականացվել է խաբեության եղանակող, որով «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերությունը պատճառվել է գույքային վնաս, ինչի վերաբերյալ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում հարուցվել է թիվ 58173619 քրեական գործը ՀՀ ՔՕ 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 325 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, բացի այդ հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել նաև, որ «Այ Թի Էքսպերտիզա» ընկերության կողմից 28.03.2019 թվականին «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերություն ուղարկված՝ մատուցվող ծառայությունների հանձնման-ընդունման ակտերը, որով իբրև թե «Այ Թի Էքսպերտիզա» ընկերությունը 2.450.0 հազ. էդրամով վերանորոգել է արագաչափ սարք, կեղծ է: Հիշատակված դեպքով նույնպես հարուցվել և Երևան քաղաքի քննչական վարչությունում քննվում է թիվ 58154618 քրեական գործը և այդ բոլոր հանգամանքների վերաբերյալ նախաքննությունը շարունակվում է, ինչի արդյունքում վերջնական անդրադարձ կկատարվի «Այ Թի Էքսպերտիզա» ՍՊ ընկերության ընդհանուր գործունեության իրավաչափությանը՝ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության գործունեության հետ»:

«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ սարքերի, սարքավորումների ընթացիկ նորոգման աշխատանքների համար 2019 թվականի մայիսի 6-ին կնքել է պայմանագիր Ա/Ձ Մուշեղ Գևորգյանի հետ: Պայմանագրով սահմանվել է, որ ծառայության գինը որոշվում է ըստ փաստացի մատուցված ծառայության: Հաշվեքննությամբ պարզվել է, որ պայմանագրի շրջանակում Ա/Ձ Մուշեղ Գևորգյանին 2019 թվականին ըստ ամիսների վճարվել է՝ սեպտեմբերին՝ 5,784.0 հազ. դրամ, հոկտեմբերին՝ 3,236.0 հազ. դրամ, նոյեմբերին՝ 5,150.0 հազ. դրամ և դեկտեմբերին՝ 6,855.0 հազ. դրամ, կամ ընդամենը՝ 21,025.0 հազ. դրամ: Սակայն, քանի որ պայմանագրով չի

սահմանվել մատուցվող ծառայությունների՝ ըստ վերանորոգման աշխատանքների տեսակների գնացուցակը, չի ներկայացվել վերանորոգման աշխատանքների բնույթը, հնարավոր չէ գնահատել պետության կարիքների համար գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի շրջանակում հատուցման ենթակա ծախսերի հաշվին Ա/Ձ Մուշեղ Գևորգյանին այդ գումարի վճարման հիմնավորվածությունը: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «Ինչ վերաբերվում է արձանագրությունում նշված Ա/Ձ Մուշեղ Գևորգյանի և «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության միջև, սարքերի նորոգման համար կնքված պայմանագրով առաջացած հարաբերություններին, ապա հարկ է նշել, որ պայմանագիրը գործում է 06 մայիս 2019 թվականից, ծառայությունների հանձնման և ընդունման արձանագրությամբ, կատարողի կողմից հստակ նշվել է մատուցվող ծառայությունների՝ ըստ վերանորգման աշխատանքների տեսակները, գները և աշխատանքի բնույթը: Նշենք, որ հիշատակված Ա/Ձ-ի գործառույթի իրականացումը կայանում է հետևյալում՝ արագաչափ սարքերի և տեսադիտարկման համակարգերի խափանման ահազանգից հետո և «Էլլիպս ՋԻ ԷՅ» ընկերության սպասարկող անձնակազմի այցից հետո, երբ պարզվում է, որ համակարգի խափանման պատճառը ծրագրային է, ապա, ըստ պայմանգրի այն վերականգնվում է «Էլլիպս ՋԻ ԷՅ» ընկերության աշխատակիցների կոմից, սակայն, եթե խափանման պատճառը արտաքին ներգործության հետևանք է (հրազեն, երկաթային առարկաների ներգործություն, հոսանքի բարձր լարում և այլն), ապա միայն այդ դեպքում՝ «Սեքյուրիթի Դրիմ» ընկերության համապատասխան աշխատակցի զեկուցագրի հիման վրա, վերանորոգման աշխատանքներին ներգրավվել է Ա/Ձ Մուշեղ Գևորգյանը: Այսինքն, Ա/Ձ Մուշեղ Գևորգյան-ը վերանորոգումը իրականացրել է միայն արտաքին ներգործության և ոչ ծրագրային խափանումների դեպքերում, իսկ այն արտաքին խափանումները, որոնք առաջացել են հանցավոր արարքների հետևանքով՝ «Սեքյուրիթի Դրիմ» ընկերության կողմից ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում և պահանջ է ներկայացվել վնասի փոխհատուցման: Ինչ վերաբերվում է հանձնման–*

ընդունման արձանագրությանը, ապա այն պատվիրատուի կողմից ստորագրվել և համապատասխան վճարումներ կատարվել են միայն վերանորգման ներկայացված սարքերի և սարքավորումների սարքինությունը ստուգելուց հետո, իսկ հիշատակված արձանագրություններում մշտապես Ա/Ձ-ի կողմից տարանջատվել է կատարված աշխատանքները, նկարագրվել է աշխատանքների բնույթը և գինը: Հարկ է նշել նաև, որ «Սեքյուրիթի Դրիմ» ընկերության կողմից ձեռքբերված արագաչափ սարքերը գերմանական «Ջենոպտիկ» ընկերության արտադրանք են, որի միակ պաշտոնական ներկայացուցիչը ԵԱՏՄ երկրներում հանդիսանում է «Ատլաս Ինտերնեյշնլ» ընկերությունը, որի կողմից առաջարկվող արագաչափ սարքերի բաղկացուցիչ մասերի և դետալների գները էականորեն գերազանցում են Ա/Ձ Մուշեղ Գևորգյանի կողմից նույն առարկաների վերանորոգման գներից: Հավելենք, որ Ա/Ձ Մուշեղ Գևորգյանի կողմից վերանորոգվել է դեռևս 2018 թվականից «Սեքյուրիթի Դրիմ» ընկերության պահեստում գտնվող, հրազենով վնասված թվով 2 արագաչափերը»:

«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ հավատարմագրային կառավարման հանձնած տեսանկարահանող սարքերով 2018 և 2019 թվականներին հայտնաբերվել է համապատասխանաբար՝ 1346231 և 1531170 վարչական իրավախախտումներ, որի արդյունքում արձանագրվել և Ճանապարհային ոստիկանության կողմից նշանակվել է համապատասխանաբար՝ 10,484,844.0 հազ. դրամի և 11,736,272.5 հազ. դրամի տուգանքներ: Տեսանկարահանող սարքերով հայտնաբերված խախտումների համար նշանակված տուգանքներից 2018 և 2019 թվականներին մուտք է եղել համապատասխանաբար՝ 7,538,704.2 հազ. դրամ և 8,760,212.3 հազ. դրամ:

Տեսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության խախտումների համար Ճանապարհային ոստիկանության կողմից նշանակված տուգանքների գանձման գործընթացի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2018 և 2019 թվականներին համապատասխանաբար՝ 235 և 91 ֆիզիկական անձինք կատարել են տարեկան 100 և ավելի խախտումներ, սակայն

այդ խախտումների համար նշանակված տուգանքներից Ճանապարհային ոստիկանությանը վճարումներ չեն կատարվել և հետագայում Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից այդ տուգանքներից որևէ մուտքեր չեն ապահովվել: Ընդ որում, այդ ֆիզիկական անձանց խախտումների համար նշանակված տուգանքների գումարը կազմել է 2018 թվականին՝ 328,251.5 հազ. դրամ, 2019 թվականին՝ 143,017.5 հազ. դրամ: Պարզվել է նաև, որ այդ ֆիզիկական անձանց կողմից նշանակված տուգանքները սահմանված ժամկետում չվճարելուց հետո 2018 և 2019 թվականներին համապատասխանաբար՝ 672 և 162 դեպքերում դրանք չեն ուղարկվել Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ տուգանքի գումարը բռնագանձելու համար:

Բացի այդ, Ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային շտեմարանի տվյալների վերլուծությունից պարզվել է, որ 2018 և 2019 թվականներին համապատասխանաբար՝ 8 և 18 ֆիզիկական անձինք կատարել են 1,000.0 հազ. դրամից ավելի գումարային 26,946.5 հազ. դրամի և 35,305.5 հազ. դրամի խախտումներ, սակայն Ճանապարհային ոստիկանությանը և հետագայում Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը վճարել են նշանակված տուգանքների գումարի չնչին մասը: Մասնավորապես, 2018 թվականին մեկ ֆիզիկական անձ կատարել է 280 խախտում, որի համար նշանակված 10,224.0 հազ. դրամի տուգանքներից վճարել է 7.0 հազ. դրամ, մեկ այլ ֆիզիկական անձ կատարել է 1085 խախտում, որի համար նշանակված 7,481.0 հազ. դրամի տուգանքներից վճարել է 8.0 հազ. դրամ: 2019 թվականին ֆիզիկական անձը կատարել է 270 խախտումներ, որի համար նշանակված 4,807.0 հազ. դրամի տուգանքներից վճարել է 5.0 հազ. դրամ, մեկ այլ ֆիզիկական անձ կատարել է 249 խախտումներ, որի համար նշանակված 3,285.5 հազ. դրամի տուգանքներից վճարել է 5.0 հազ. դրամ: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «Ինչ վերաբերվում է նշանակված տուգանքները ֆիզիկական անձնաց կողմից սահմանված ժամկետներում չվճարելուց հետո*

բռնագանձելու համար, 2018-2019թթ.-ին, համապատասխանաբար ըստ տարիների՝ 672 և 162 դեպքերում դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն չուղարկելուն, ապա այն ունի լրացուցիչ ուսումնասիրության կարիք, քանի որ դրա համար անհրաժեշտ է ոչ միայն արձանագրության 5-րդ և 6-րդ հավելվածներով ներկայացված ֆիզիկական անձի ՀԾՀ-ները, այլ նաև վարչական ակտերի համարները: Այդ ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են»:

2018 և 2019 թվականների համար ՀՀ ոստիկանությունը գնանշման հարցում և էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգերի արդյունքում առկա ֆինանսական միջոցների հաշվին կնքել է հանդերձանքի գնման համապատասխանաբար՝ 532,905.1 հազ. դրամի թվով 45 և 678,874.3 հազ. դրամի թվով 47 պայմանագրեր:

2018 թվականին կնքված պայմանագրերով գնման ենթակա հանդերձանքը կատարողների կողմից մատակարարվել է ամբողջությամբ: «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ հետ կնքված թիվ ՀՀԿԱՈ-ԳՀԱՊՁԲ-2018-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-53/8 պայմանագրով մատակարարումներն իրականացվել են պայմանագրերով սահմանված մատակարարման ժամկետների խախտումներով, որի համար ՀՀ ոստիկանությունը սահմանված կարգով հաշվարկել և պետական բյուջեի օգտին է գանձել 50.2 հազ. դրամ տույժ:

2019 թվականին առանձին պայմանագրերով գնման ենթակա հանդերձանքը մատակարարվել է թերի քանակներով կամ ընդհանրապես չի մատակարարվել (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

2019 թվականին հանդերձանքի գնման այմանագրերով չմատակարարված ապրանքներ

հազ. դրամ

Կազմակերպության անվանում	Պայմանագրի համար	Պայմանագրի գին	Չմատակարարված ապրանքներ	
			Անվանում	Գումար
«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/4	22,890.5	Կոստյում (բաճկոն – տաբատ կիսաբամբակյա, կեպիով կ/թ)	2,422.5
			Փողկապ	422.8

			Կոստյում (բաճկոն – տաբատ կիսաբամբակյա, կեպիով)	9808.5
«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/4	10,002.3	Կոստյում (բաճկոն – տաբատ կիսաբամբակյա, կեպիով)	6025.5
			Կոստյում (բաճկոն – տաբատ, գունաքողարկող, կեպիով)	3976.8
«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/2	50,151.9	Կոստյում (տարազա-բաճկոն – տաբատ կիսաբրդյա, ամենօրյա)	15,091.2
			Ուսադիր կարովի	831.6
			Տաբատ կիսաբրդյա	10,143.0
			Վերնաշապիկ կարճաթև (մոխրաերկնագույն)	5,890.6
			Վերնաշապիկ կ/թ (սպիտակ)	12,480.0
«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/2	39,690.0	Կոստյում (տարազա-բաճկոն – տաբատ կիսաբրդյա, ամենօրյա)	39,690.0
«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՄԵՏՐՈ/ՀԱԳՈՒՍՏ-55/2	5,470.6	Կոստյում (բաճկոն – տաբատ կիսաբրդյա)	5,470.6
«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-57/2	6,318.2	Թիկնոց - ուսնոց	690.0
			Արտացոլող բաճկոններ	2,625.0
«ԱԲԻ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/6	82,678.3	Կոստյում (բաճկոն – տաբատ կիսաբրդյա)	37,429.7
			Կիսավերարկու	20,673.8
			Կիսավերարկու ՃՈ	9,639.0
«ԱԲԻ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/6	34,872.0	Կոստյում (բաճկոն – տաբատ կիսաբրդյա)	26,892.0
«ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/7	9,447.8	Կիսավերարկու	6,517.3
ԸՆԴԱՄԵՆԸ		261,521.6		216,719.9

Ընդհանուր առմամբ, 2019 թվականի համար հանդերձանքի գնման պայմանագրերով թերի մատակարարումը կազմել է 216,719.9 հազ. դրամ, կամ տարվա համար նախատեսված հանդերձանքի քանակի 31.9%-ը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը»: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման հավելված թիվ 1-ի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «դ» պարբերությամբ սահմանվել է՝ «գնման ընթացակարգը

չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում են ըստ առանձին չափաբաժինների: Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում՝ կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով»: Հետևաբար, չմատակարարված ապրանքների չափաբաժինների մասով նշված պայմանագրերը ենթակա էին լուծման, իսկ պայմանագրերի ապահովման գումարը՝ վճարման:

Փաստորեն, 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ մատակարար կազմակերպությունների կողմից չմատակարարված 216,719.9 հազ. դրամի ապրանքների դիմաց պետական բյուջե ենթակա էր վճարման պայմանագրերի ապահովման 10 տոկոսի չափով գումարը, ինչպես նաև ենթակա էր հաշվարկել և գանձել չմատակարարված ապրանքների մատակարարման ժամկետների ուշացված օրերի համար պայմանագրերով նախատեսված տույժերը՝ առնվազն 2,941.1 հազ. դրամ:

ՀՀ ոստիկանությունը 2020 թվականի հունվարի 30-ին gnumner.am կայքում հրապարակել է այդ պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները՝ հիմք ընդունելով այն, որ պայմանագրերով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Միաժամանակ, ՀՀ ոստիկանությունը ծանուցել է մատակարարներին, որ պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը և վճարման պահանջագրերը կներկայացվեն համապատասխան բանկեր՝ պայմանագրի ապահովման գումարները պետական բյուջե փոխանցելու համար: 2020 թվականի հունվարի 30-ին լուծված չորս պայմանագրերի տուժանքի մասին համաձայնագրերը ուժի մեջ են եղել մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ հինգ պայմանագրերի տուժանքի մասին համաձայնագրերում գործողության ժամկետի վերաբերյալ նշվել է «լրացվում է մասնակցի կողմից»: Կնքված չորս պայմանագրերի տուժանքի

մասին համաձայնագրերի գործողության ժամկետը լրանալու և հինգ պայմանագրերի տուժանքի մասին համաձայնագրերում գործողության ժամկետը անորոշ ձևակերպելու հետևանքով պայմանագրերի ապահովման 21,671.9 հազ. դրամ գումարը պետական բյուջե չի փոխանցվել:

Ծանուցումներով ՀՀ ոստիկանությունը մատակարար կազմակերպություններին տեղեկացրել է նաև, որ իրենց տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմնին՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով: «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանվել է՝ «Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը»: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 45-րդ կետով սահմանվել է՝ «Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին»: Սակայն, ՀՀ ոստիկանությունը սահմանված 5 աշխատանքային օր ժամկետի ուշացումով մատակարար կազմակերպությունների տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազոր մարմին 2020 թվականի փետրվարի 18-ին և 19-ին, որի պատճառով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իր համապատասխան որոշումներով (23.03.2020թ. թիվ ՍՑ-ԼՕ-2020/56, 23.03.2020թ. թիվ ՍՑ-ԼՕ-2020/57, 23.03.2020թ. թիվ ՍՑ-ԼՕ-2020/58, 23.03.2020թ. թիվ ՍՑ-ԼՕ-2020/60) մերժել է այդ կազմակերպություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգերը: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ « ՀՀ ոստիկանության հանդերձանքի 2019 թ.-ի գնման առանձին պայմանագրերով նախատեսված սակայն թերի կամ ընդհանրապես*

չմատակարարված՝ 216,7 մլն. դրամ ընդհանուր գումարով խմբաքանակների վերաբերյալ ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում կատարված ծառայողական քննության նյութերը (ներառյալ պայմանագրերի ապահովման 10 %-ի չափով պետական բյուջե վճարման ենթակա գումարները և այլն) ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն: Արդյունքների մասին կտեղեկացվի լրացուցիչ»:

2018 և 2019 թվականներին ՀՀ ոստիկանության և «Հայփոստ» ՓԲԸ միջև փոստային ծառայությունների մատուցման համար կնքվել են պայմանագրեր՝ 26.02.2018թ. թիվ CPS-15-02-18՝ 154,372.2 հազ. դրամի, 14.05.2018թ. թիվ CPS-10-05-18՝ 416,141.1 հազ. դրամի, 25.02.2019թ. թիվ CPS-15-02-19՝ 382,144.9 հազ. դրամի, 24.12.2019թ. թիվ CPS-23-12-19՝ 164,414.4 հազ. դրամի:

Կնքված այդ պայմանագրերի շրջանակներում իրականացվել է երեք տեսակի փոստային ծառայությունների մատուցում.

- մինչև 20 գրամ քաշով, «պատվիրված» ձևակերպմամբ և ետադարձ ծանուցմամբ նամակի ունիվերսալ փոստային ծառայություն,
- երկու հասցեով առաքանիների երկրորդ հասցեով վերաուղարկում,
- 20 գրամ քաշը գերազանցող կամ արտասահման առաքանու ուղարկում:

Ըստ «Հայփոստ» ՓԲԸ կողմից ներկայացված հարկային հաշիվների, ՀՀ ոստիկանությունը մինչև 20 գրամ քաշով ունիվերսալ փոստային ծառայություն 1 հատի համար վճարել է 350 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), առաքանու վերաուղարկման 1 հատի համար՝ 105 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), 20 գրամ քաշը գերազանցող կամ արտասահման առաքանու ուղարկման 1 հատի համար՝ 2370 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ):

Համաձայն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի կողմից 28.12.2001թ. հաստատված Հայաստանի Հանրապետության տարածքում փոստային կապի ծառայությունների սակագների առաքանին երկրորդ հասցեով վերաուղարկելու սակագինը կազմում է 105 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), որը համապատասխանում է հարկային հաշիվներում ներկայացված արժեքին:

Միաժամանակ, ըստ հաստատված սակագների, մինչև 20 գրամ քաշով, պատվիրված, ետադարձ ծանուցմամբ նամակի ուղարկման սակագների հանրագումարը կազմում է 280 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), սակայն ՀՀ ոստիկանությունը այդ տեսակի փոստային ծառայության 1 հատի համար վճարել է 350 դրամ կամ 70 դրամ ավելի գումար:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի կողմից 28.12.2001թ. հաստատվել են նաև Հայաստանի Հանրապետության միջազգային փոստային ծառայությունների սակագները: Այդ սակագներով 20 գրամից բարձր քաշով արտասահման ուղարկվող առաքանու 1 հատի արժեքը կազմում է 1970 դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), սակայն ՀՀ ոստիկանությունը այդ տեսակի փոստային ծառայության 1 հատի համար վճարել է 2370 դրամ կամ 400 դրամ ավելի գումար:

Համաձայն կնքված պայմանագրերի, «Հայփոստ» ՓԲԸ մատուցում է նաև լրացուցիչ ծառայություններ, մասնավորապես, ավտոմատացված ծալում, ավտոմատացված ծրարավորում, թղթի ներդրում ծրարների մեջ, հասցեի տպագրում, ծրար: Սակայն, լրացուցիչ այդ ծառայությունների մատուցման արժեքները սահմանված չեն պայմանագրերով և հնարավոր չէ գնահատել սակագներից ավելի վճարված գումարների հիմնավորումը:

Հարցի ուսումնասիրության ընթացքում համեմատություն է կատարվել փոստային ծառայութունների ևս մեկ խոշոր օգտատեր հանդիսացող ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրերի սակագների հետ (ԴԱՀԿ ծառայության 2018 և 2019 թվականների գործունեության նկատմամբ հաշվեքննության տվյալներ): Պարզվել է, որ ԴԱՀԿ ծառայության մեկ առաքանու գինը, պայմանավորված նամականիշի արժեքով տատանվում է 70 դրամից մինչև առավելագույնը 280 դրամ: Ընդ որում, ԴԱՀԿ ծառայությունը առաքանու ծրարները գնում է ոչ թէ «Հայփոստ» ՓԲԸ-ից, այլ մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված մատակարարներից, մեկ հատը՝ մինչև 12 դրամ գնով: Փաստորեն, պետական կարիքների համար գնման

գործընթացում չի ցուցաբերվում միասնական մոտեցում և պետական կարիքների համար կնքված պայմանագրերով առկա են սակագների էական տարբերություններ: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ քննարկման փուլում է ոստիկանությանը մատուցված ծառայությունների սակագների հիմնավորվածության հարցը: Արդյունքները կներկայացվի առաջիկա 4-5 օրվա ընթացքում»:*

ՀՀ ոստիկանության և «Լեհական արժեթղթերի արտադրամաս» բաժնետիրական ընկերության միջև նույնականացման անվանաքարտերի տպագրման աշխատանքների կատարման համար 27.04.2018թ. կնքվել է ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ/2018-ԱՎՎ պայմանագիրը՝ 349,977.6 եվրո (ներառյալ ԱԱՀ) արժեքով, որը չի կարող գերազանցել 215,732.0 հազ. դրամը, մեկ միավորի գինը՝ 2.88 եվրո (ներառյալ ԱԱՀ), որը չի կարող գերազանցել 1,775.2 դրամը: Պայմանագրով նույնականացման անվանաքարտերի տպագրման ընդհանուր քանակը 121520 հատ է, որը նախատեսվել էր մատակարարել ըստ հետևյալ ժամկետային և քանակային բաշխվածությունների՝ 3-րդ եռամսյակում՝ 85000 հատ, որից 25000 հատը՝ ոչ ուշ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի հուլիսի 20-ը, 20000 հատը՝ ոչ ուշ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի հուլիսի 31-ը, 40000 հատը՝ ոչ ուշ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի օգոստոսի 31-ը և 4-րդ եռամսյակում՝ 36520 հատ, բայց ոչ ուշ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 31-ը: Պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձման ընդունման արձանագրությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ մատակարարումներն իրականացվել են պայմանագրով սահմանված ժամկետների խախտումներով: Պայմանագրի 5.3 կետով աշխատանքի կատարման ժամկետի խախտման յուրաքանչյուր օրվա համար սահմանված է տույժ՝ չկատարված աշխատանքի գնի 0.05 տոկոսի չափով: Հաշվեքննությամբ պարզվել է, որ 16000 նույնականացման քարտ մատակարարվել է 3 օր ուշացումով, իսկ 36000 հատը՝ 5 օր ուշացումով: Փաստորեն, 2019

թվականի հունվարի 1-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել 154,9 հազ. դրամ տույժ:

ՀՀ ոստիկանության և «Լեհական արժեթղթերի արտադրամաս» բաժնետիրական ընկերության միջև նույնականացման անվանաքարտերի տպագրման աշխատանքների կատարման համար 26.07.2018թ. կնքվել է ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ/2018-ԱՎՎ-2 պայմանագիր՝ 403,200.0 եվրո (ներառյալ ԱԱՀ) արժեքով, որը չի կարող գերազանցել 248,539.2 հազ. դրամը, մեկ միավորի գինը՝ 2.88 եվրո (ներառյալ ԱԱՀ), որը չի կարող գերազանցել 1,775.2 դրամը: Պայմանագրով նույնականացման անվանաքարտերի տպագրման ընդհանուր քանակը 140000 հատ է, որը նախատեսվել էր մատակարարել 4-րդ եռամսյակում, որից 12000 հատը՝ պայմանագիրը ստորագրելուց հետո 15 օրվա ընթացքում, 60000 հատը՝ մինչև 2018 թվականի նոյեմբերի 30-ը, 68000 հատը՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 10-ը: Պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձման ընդունման արձանագրությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ 12000 նույնականացման քարտ մատակարարվել է 123 օր ուշացումով, 30 000 հատը՝ 16 օր, մեկ այլ 30000 խմբաքանակը՝ 20 օր և 58000 հատը՝ 10 օր ուշացումներով: Փաստորեն 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ պայմանագրի 5.3 կետի համաձայն ենթակա էր հաշվարկել և գանձել 2,483.9 հազ. դրամ տույժ: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «ՀՀ ոստիկանության և «Լեհական արժեթղթերի արտադրամաս» բաժնետիրական ընկերության միջև 27.04.2018թ. կնքված N ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ/2018-ԱՎՎ և 26.07.2018թ. կնքված N ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՔԱՐՏ/2018-ԱՎՎ-2 պայմանագրերով մատակարարվել են համապատասխանաբար 121520 և 140000 հատ նույնականացման քարտեր: ՀՀ Հաշվեքննիչ պալատի արձանագրության համաձայն մատակարարման ժամկետների խախտման համար մատակարարից անհրաժեշտ էր գանձել համապատասխանաբար՝ 154,9 հազար և 2.483,9 հազար դրամ տույժ: Արձանագրված տույժերը չգանձելը պայմանավորված է հետևյալ հիմնական հանգամանքով. ՀՀ ոստիկանության և «Լեհական արժեթղթերի*

արտադրամաս» բաժնետիրական ընկերության միջև դեռևս 28.11.2011թ.-ին կնքված N ԱՇՁԲ-10/53 պայմանագրով նշված ընկերությունը 2012-2016թթ. ՀՀ ոստիկանությանը մատակարարել է նույնականացման քարտերի և կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագրերի բլանկներ, որոնց դիմաց վճարումները ՀՀ ոստիկանության կողմից կատարվել են ուշացումներով: Պատճառը կայանում էր նրանում, որ ոստիկանության այդ տարիների բյուջեներով համապատասխան միջոցներ չէր նախատեսվում և փաստացի մատակարարված յուրաքանչյուր խմբաքանակի համար վճարումները կատարվում էին ՀՀ կառավարության առանձին որոշումներով լրացուցիչ հատկացվող միջոցների հաշվին՝ ուշացումներով: Լեհական ընկերության 30.03.2016թ. թիվ EBE-081-55/2016 գրությամբ ներկայացվել է պայմանագրով նախատեսված՝ 222.435.430,03 դրամ չափով տույժերի հաշվարկ, որից հետո կայացած մի քանի երկարատև բանակցությունների արդյունքում (այդ թվում՝ ՀՀ-ում Լեհաստանի Հանրապետության դեսպանի ներգրավմամբ) համաձայնություն է ձեռքբերվել չկիրառել պայմանագրով նախատեսված տույժերը: Վերոգրյալով պայմանավորված, դեռևս 2018թ. ՀՀ ոստիկանության ղեկավարության մոտ կայացած քննարկման արդյունքում որոշում է կայացվել ձեռնպահ մնալ լեհական նույն ընկերության նկատմամբ 2018թ.-ի պայմանագրերով, անհամեմատ փոքր չափերով տույժերի կիրառումից»:

ՀՀ ոստիկանության կարիքների համար անձնագրերի տպագրման աշխատանքների ձեռքերման համար 2017 թվականի դեկտեմբերի 1-ին Procurenment.am կայքում տեղադրվել է ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ԱՆՁՆ/2018-ԱՎՎ ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտարարությունը և հրավերը: Հայտերի բացման օր է սահմանվել 2017 թվականի դեկտեմբերի 18-ը: 2017 թվականի դեկտեմբերի 15-ին procurenment.am կայքում տեղադրվել է հայտարարություն՝ «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ կողմից ներկայացված բողոքի մասին, որով ընկերությունը պահանջել է չկայացած հայտարարել ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ԱՆՁՆ/2018-ԱՎՎ ծածկագրով գնման ընթացակարգը: Նույն օրը կայքում

տեղադրվել է բողոքարկման խորհրդի նիստի ժամանակացույցը, որով «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ կողմից ներկայացրած բողոքի քննության առաջին նիստը նշանակվել է 2017 թվականի դեկտեմբերի 21-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը», իսկ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանվել է կասեցման ժամկետը՝ «նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ»: Հետևաբար, բողոքի հրապարակման օրվանից՝ 2017 թվականի դեկտեմբերի 15-ից գնման գործընթացը պետք է կասեցվեր: Սակայն, 2017 թվականի դեկտեմբերի 19-ին procurenment.am կայքում տեղադրվել է գնահատող հանձնաժողովի դեկտեմբերի 18-ին կայացած հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունը (արձանագրություն թիվ 2), ըստ որի՝ բացվել և ուսումնասիրվել են երկու մասնակիցների՝ «Գարսու Պասաուլիս» ՓԲԸ և «Լեհական արժեթղթերի արտադրամաս» ԲԸ կողմից ներկայացված գնային առաջարկները, ու որոշվել է հանձնաժողովի հաջորդ նիստը կայացնել որակավորման չափորոշիչները ստուգելուց հետո: 2017 թվականի դեկտեմբերի 29-ին procurement.am կայքում տեղադրվել է բողոքարկման խորհրդի դեկտեմբերի 26-ի որոշումը, որով բավարարվել է «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ բողոքը, քանի որ «անհիմն կերպով բարդացվել է հնարավոր մասնակիցների մասնակցությունը գնման գործընթացին», և պարտավորեցվել է հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած: Գնման ընթացակարգը չկայացած հայատարարելու մասին հայտարարությունը procurement.am կայքում տեղադրվել է 2018 թվականի հունվարի 10-ին:

2018 թվականի հունվարի 24-ին procurement.am կայքում տեղադրվել է ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ԱՆՁՆ/2018-ԱՎՎ/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի նոր հայտարարությունը: 2018 թվականի փետրվարի 9-ին procurement.am կայքում տեղադրվել է գնահատող հանձնաժողովի նիստի 08.02.2018թ. թիվ 2

արձանագրությունը, ըստ որի մրցույթի հրավերի տեքստում կատարվել է տեխնիկական բնութագրի փոփոխություն: Սակայն, կատարված փոփոխության վերաբերյալ կայքում տեղեկատվություն չի հրապարակվել: Մրցույթի հրավերի 3.4 կետով սահմանվել է՝ «Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում համակարգում և տեղեկագրում»: Մրցույթի հրավերի 3.5 կետի համաձայն՝ «Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին համակարգում և տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման վավերականության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում»: 2018 թվականի հունվարի 24-ին կայքում տեղադրված հրավերով հայտերի հրատապ բացումը պետք է տեղի ունենար փետրվարի 8-ին: Հետևաբար, հրավերում կարող էր կատարել փոփոխություն մինչև փետրվարի 3-ը, որի մասին հայտարարությունը պետք է հրապարակվեր երեք օրացուցային օրվա ընթացքում՝ փետրվարի 4-ից մինչև 6-ը ներառյալ: Սակայն, փոփոխությունը կատարվել է փետրվարի 8-ին և հրապարակվել է փետրվարի 9-ին, որը չի համապատասխանում հրավերի 3.4 կետի պահանջին: Բացի այդ, չի ապահովվել նաև հրավերի 3.5 կետի պահանջը՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը չի հաշվվել փոփոխության մասին հայտարարության հրապարակման օրվանից՝ փետրվարի 9-ից 5 օրացուցային օր հետո, և հայտերը բացվել են հրավերով նախկինում սահմանված օրը՝ փետրվարի 8-ին (արձանագրություն թիվ 3), ինչը հանդիսանում է սահմանափակում հնարավոր նոր մասնակիցների համար:

Ըստ armeps.am կայքում տեղադրված տեղեկատվության՝ ՀԲՄԱՇՁԲ-ԱՆՁՆ/2018-ԱՎՎ/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթին հայտ են ներկայացրել

նախկին փուլի երկու մասնակիցները՝ «Գարսու Պարսաուլիս» ՓԲԸ, «Լեհական արժեթղթերի արտադրամաս» ԲԸ, ինչպես նաև՝ «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ: Սակայն, գնահատող հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 8-ի հայտերի բացման նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնման հայտ է ներկայացրել «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ, որի ներկայացրած փաստաթղթերը հանձնաժողովը գնահատել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող և ճանաչել է ընկերությանը գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Փաստորեն, չեն ապահովվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ «Հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

1) հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի անվանումը (անունը).

2) տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

5) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված.

6) տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին»:

Դրանից հետո, 2018 թվականի փետրվարի 13-ին procurement.am կայքում տեղադրվել է գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի նույն համարի և ամսաթվի մեկ այլ արձանագրություն, որի համաձայն՝ բացվել և գնահատվել են բոլոր երեք մասնակիցների գնային առաջարկները: Արձանագրության տեքստում չկա որևէ պարզաբանում նախորդ նիստի չեղարկման պատճառների վերաբերյալ:

2018 թվականի փետրվարի 14-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 4) գնահատող հանձնաժողովը մրցույթի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչել «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ն և վերջինիս հետ 2018 թվականի մարտի 12-ին կնքվել է գնման պայմանագիր՝ 527,800.0 հազ. դրամ արժեքով:

2019 թվականի ապրիլի 2-ին armeps.am կայքում հրապարակվել է հայտարարություն գնանշման հարցման մասին ՀՀ ոստիկանության կարիքների համար դիզելային գեներատորի ձեռք բերման նպատակով: Գնման նախահաշվային գինը սահմանվել է 28,200.0 հազ. դրամ:

Մրցույթին մասնակցել են հինգ կազմակերպություններ, որոնցից ամենացածր գինը առաջարկել է «ԱԷՍ Թրեյդ» ՍՊԸ՝ 14,500.0 հազ. դրամ: Գնահատող հանձնաժողովը, որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից, «ԱԷՍ Թրեյդ» ՍՊԸ-ից պահանջել է ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին համապատասխանությունը հիմնավորող նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը: «ԱԷՍ Թրեյդ» ՍՊԸ ներկայացրել է միայն «KATANA KD 225» դիզելային գեներատորի տեխնիկական բնութագիրը, առանց դրա տեղադրման ու մոնտաժման աշխատանքների, անխափան սնուցման սարքի և երաշխիքային սպասարկման: Փաստորեն, «ԱԷՍ Թրեյդ» ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկը ներառել է միայն դիզելային գեներատորի գինը: Գնահատող հանձնաժողովը փաստաթղթերը թերի ներկայացնելու և հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին անհամապատասխանությունների պատճառով ընկերությանը հաղթող չի ճանաչել և 26.04.2019թ. դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «ԱԷՍ Թրեյդ» ՍՊԸ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով: ՀՀ ֆինանսների նախարարությունը 03.05.2019թ. դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար: ՀՀ կառավարության 526-Ն որոշման 46-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը նիստի արձանագրության մեջ պետք է մանրամասն նկարագրի հայտնաբերված անհամապատասխանությունները: Բողոքներ քննող անձը որոշել է նախաձեռնված

ընթացակարգը մերժել, քանի որ գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությամբ հայտնաբերված անհամապատասխանությունները մանրամասն նկարագրված չեն:

Մրցույթում հաղթող է ճանաչվել հաջորդաբար 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ, որի հետ ՀՀ ոստիկանությունը կնքել է 16.05.2019թ. թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-դիզ-գեներատոր պայմանագիր՝ 24,780.0 հազ. դրամ արժեքով: Ընդ որում, «Էյչ Գրուպ» ՍՊԸ պայմանագիր կնքելու համար ներկայացրել է «KATANA KD 225» ապրանքանշանի դիզելային գեներատոր: Պայմանագիր կնքելու համար «Էյչ Գրուպ» ՍՊԸ ներկայացրել է մրցույթի հրավերով սահմանված գնման առարկայի նույն տեխնիկական բնութագիրը, որը, սակայն, չի համապատասխանում «ԱԷՍ Թրեյդ» ՍՊԸ կողմից առաջարկված և արտադրողի պաշտոնական կայքում տեղադրված «KATANA KD 225» դիզելային գեներատորի տեխնիկական բնութագրին (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Դիզելային գեներատորների տեխնիկական բնութագրերի առանձին ցուցանիշները

Տեխնիկական բնութագիրը	Մրցույթի հրավերով պահանջված	«KATANA KD 225»
սեղման աստիճան	16:1	17:1
շարժիչի ղեկավարման համակարգ	էլեկտրոնային	մեխանիկական
վառելիքի բաքի գործարանային տարողությունը՝ առնվազն 8 ժամ 75% բեռնվածության դեպքում	240լ	200լ
պաշտպանությունը	IP23	IP22
ստարտեր	12v	24v
վթարի վերաբերյալ ազդանշան	GSM և Mail service	GSM SMS message
քաշը	ոչ ավելի քան 2200 կգ	ոչ ավելի քան 2250 կգ

Փաստորեն, գնահատող հանձնաժողովը պետք է ճանաչեր «Էյչ Գրուպ» ՍՊԸ կողմից առաջարկված «KATANA KD 225» դիզելային գեներատորը մրցույթով պահանջված գնման առարկայի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող և մերժեր «Էյչ Գրուպ» ՍՊԸ հետ պայմանագիր կնքելը:

Ավելին, «Էյչ Գրուպ» ՍՊԸ կողմից «KATANA KD 225» դիզելային գեներատորի փոխարեն ՀՀ ոստիկանությանը փաստացի մատակարարվել է «KATANA KD 250» դիզելային գեներատոր, որը չի համապատասխանում մրցույթի հրավերի և կնքված պայմանագրով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրին: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «ՀՀ ոստիկանության կողմից դիզելային գեներատորի ձեռքբերման նպատակով 2019 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԴԻԶ-ԳԵՆԵՐԱՏՈՐ ծածկագրով կազմակերպված ընթացակարգին մասնակցել են 5 մասնակից: Նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն: Վերջինիս կողմից ներկայացված փաթեթը տրամադրվել է պատասխանատու ստորաբաժանմանը ստուգելու և գնահատելու նպատակով: Պատասխանատու ստորաբաժանման կողմից արձանագրվել է, որ հայտով ներկայացված ապրանքի բնութագիրը չի համապատասխանում հրավերով պահանջված ապրանքի տեխնիկական բնութագրին՝ բացակայում են լրակազմի մեջ մտնող կարևոր սարքավորումներ: Պահպանելով գնումների մասին օրենսդրության բոլոր պահանջները (ՀՀ կառավարության 04.05.2017թ. որոշման 41-րդ կետ) ընթացակարգը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և մասնակցին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հարկ է անպայման նշել, որ ընթացակարգի կասեցման մասին թիվ 3 արձանագրությունը բացի տեղեկագրում /gnumner.am/ հրապարակելուց, նաև էլեկտրոնային եղանակով մասնակցին է ուղարկվել արձանագրված անհամապատասխանությունների բոլոր մանրամասները, որոնք ստացվել էին պատասխանատու ստորաբաժանման կողմից (կցվում է): Մասնակցի կողմից անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվել, որով պայմանավորված ՀՀ կառավարության 04.05.2017թ. որոշման 42-րդ կետի համաձայն հաղթող մասնակից է ճանաչվել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն: «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը նույնությամբ և ամբողջությամբ, որը ուղարկվել է պատասխանատու ստորաբաժանում՝ դիրքորոշում տրամադրելու նպատակով: Վերջինիս կողմից*

ստացվել է պատասխան առ այն, որ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը համապատասխանում է հրավերով ներկայացված պահանջներին և գնահատվել է բավարար, որի հիմքերով էլ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կարավարության 04.05.2017թ. որոշման 45-րդ կետի դրույթները, «ԱԷՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտը սահմանված ժամկետներում (5 աշխատանքային օրվա ընթացքում) ուղարկվել է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Ինչ վերաբերում է բողոքներ քննող անձի այն պատճառաբանությանը, որ մասնակցին մանրամասն չի ծանուցվել անհամապատասխանությունների բովանդակությունը, ապա ինչպես արդեն վերը նշվեց դա չի համապատասխանում իրականությանը, որի ապացույցն է հանդիսանում մասնակցի էլ.փոստին ուղարկված ծանուցումը բոլոր մանրամասներերով: Իսկ հավելյալ փաստաթղթեր կամ դիրքորոշում տվյալ ընթացակարգի վերաբերյալ բողոքներ քննող անձի կողմից չեն պահանջվել»:

2017 թվականի դեկտեմբերի 26-ին Procurenment.am կայքում տեղադրվել է ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՊՁԲ-2018-ՃՈ-ՍԱՐՔ-1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտարարությունը և հրավերը՝ ճանապարհային երթևեկության հսկման սարքերի ձեռք բերման համար: Նախահաշվային արժեքը կազմել է 197,000.0 հազ. դրամ, որի չափով ՀՀ ոստիկանությունը կնքել է պայմանագիր «Սիմիկոն ԱՌՄ» ՍՊԸ հետ: Գնման շրջանակում մատակարարվել են 70 հատ ճանապարհային երթևեկության հսկման սարքեր:

Հրատապ բաց մրցույթի վերաբերյալ գնումների armeps.am պաշտոնական կայքում հրապարակվել է «Սիմիկոն ԱՌՄ» ՍՊԸ և «Էյչ Գրուպ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկը՝ 197,000.0 հազ. դրամ, որում ներկայացվել է միայն արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը), իսկ ԱԱՀ չի ներկայացվել: Հայտով ներկայացվել է նաև

«Սիմիկոն ԱՌՄ» ՍՊԸ և «Էյչ Գրուպ» ՍՊԸ միջև 27.12.2017թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիրը:

Գնահատող հանձնաժողովը հայտերի բացման 10.01.2018թ. թիվ 2 նիստին (արձանագրություն թիվ 2) արձանագրել է՝ գնման ընացակարգին հայտ է ներկայացրել «Սիմիկոն ԱՌՄ» ՍՊԸ, որը աշխատում է համատեղ գործունեությամբ «Էյչ Գրուպ» ՍՊԸ հետ: Արձանագրվել է նաև, որ «Սիմիկոն ԱՌՄ» ՍՊԸ աշխատում է առանց ԱԱՀ: Գնահատող հանձնաժողովը որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից է ճանաչել «Սիմիկոն ԱՌՄ» ՍՊԸ այն դեպքում, երբ հայտը և գնային առաջարկը ներկայացվել էր կոնսորցիումի կողմից: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի՝ «Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել՝ Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները»: Հետևաբար, կոնսորցիումի գնային առաջարկը ներկայացվել է օրենսդրության պահանջներին անհամապատասխան, առանց ԱԱՀ: Մրցույթի հրավերի 8.9 կետի պահանջի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և առաջարկեր մասնակցին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, որը չշտկելու դեպքում հայտը գնահատեր անբավարար և մերժեր: Սակայն, գնահատող հանձնաժողովը չի առաջնորդվել հրավերի այդ պահանջներով և 18.01.2018թ. գնահատման արդյունքների հաստատման նիստին (արձանագրություն թիվ 3) մրցույթի հաղթող է ճանաչել «Սիմիկոն ԱՌՄ» ՍՊԸ:

Հարկ է նշել նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ հարկման շեմը՝ 115,000.0 հազ. դրամ),

ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Բացի այդ, գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ կատարված հարցմանն ի պատասխան ներկայացված եզրակացության համաձայն՝ հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների «Սիմիկոն ԱՌՄ» ՍՊԸ համախառն եկամուտը կազմել է 101,649.5 հազ. դրամ (կազմակերպությունը գրանցվել է 2017 թվականի մայիսի 25-ին): Մրցույթի հրավերի 2.5 կետի համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի հայտը ներկայացնելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ըստ գնահատող հանձնաժողովի արձանագրությունների՝ գնման ընթացակարգի հայտ ներկայացրած և հաղթող ճանաչված մասնակից է հանդիսացել «Սիմիկոն ԱՌՄ» ՍՊԸ, որի նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը՝ 101,649.5 հազ. դրամ, պակաս է ընթացակարգի շրջանակում ներկայացրած գնային առաջարկից՝ 197,000.0 հազ. դրամից: Հետևաբար, գնահատող հանձնաժողովը չէր կարող մրցույթին փաստացի միանձնյա հանդես եկող «Սիմիկոն ԱՌՄ» ՍՊԸ ճանաչել համապատասխանող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին:

Փաստորեն, ճանապարհային երթևեկության հսկման սարքերի գնման ընթացակարգը իրականացվել է օրենսդրության պահանջներին անհամապատասխան, և մրցույթը չկայացած հայտարարելու և նոր գնման ընթացակարգ սկսելու փոխարեն մրցույթում հաղթող է ճանաչվել «Սիմիկոն ԱՌՄ» ՍՊԸ, որի հետ կնքվել է գնման պայմանագիր: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության կարիքների համար անհրաժեշտ երթևեկության հսկման սարքերի ձեռքբերման նպատակով 26.12.2017 թվականին ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՊՁԲ-*

2018-ՃՈ-ՍԱՐՔ-1 ծածկագրով հայտարարվել է գնման ընթացակարգ: Հարկ է նշել, որ տվյալ ընթացակարգին համատեղ գործունեության կարգով մասնակցել է <<Սիմիկոն ԱՌՄ>> ՍՊԸ-ն, որը ըստ էության լիազորված է եղել <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ի հետ 27.12.2017թ-ին կնքված <<ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ>> պայմանագրի 2,1 կետով՝ սույն պայմանագրով իրականացվող գործունեության ընդհանուր գործերը վարում է Գործընկեր 1-ը: Հատկանշական է նշել, որ 2017 թվականին հայտարարված ընթացակարգի հրավերը համապատասխանում է այդ ժամանակահատվածում գործող օրենսդրությանը համապատասխան, ուստի <<Սիմիկոն ԱՌՄ>> ՍՊԸ-ն գնային առաջարկը ներկայացված հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, համաձայն որի ըստ էության ակնհայտ է դառնում, որ ՍՊԸ-ն չի հանդիսանում ԱԱՀ վճարող: Հաշվի առնելով, որ հիշյալ պայմանագրի 1.2.2 կետի համաձայն Գործընկեր 2-ը որպես ավանդ ներդնում է ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՊՁԲ-2018-ՃՈ-ՍԱՐՔ-1 ծածկագրով ընթացակարգի հրավերին համապատասխան ֆինանսական միջոցներ /շրջանառություն/, ուստի ՀՀ ոստիկանության սահմանված կարգով հարցում է կատարվել Պետական եկամուտների կոմիտե, որից ստացված պատասխանի հիման վրա <<Սիմիկոն ԱՌՄ>> ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից համարվել է բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացված մասնակից: Ինչ վերաբերվում է արձանագրությամբ ներկայացված այն դիտարկմանը, որ հրավերի 8,9 կետի համաձայն գնահատող հանձնաժողովի կողմից նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ, ապա հարկ է նշել, որ գնահատող հանձնաժողովը իրավասու չէր կասեցնել նիստը, հաշվի առնելով, որ ըստ արձանագրությամբ ներկայացված դիրքորոշման անհամապատասխանությունները կապված են գնային առաջարկին: Հարկ է նշել, որ կասեցումը կարող է իրականացվել միայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին 04.05.2017 թվականի թիվ 526-ն որոշման 41-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան, այն է /Եթե հայտերի բացման նիստի

ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Իսկ հանձնաժողովի կողմից գնային առաջարկը բավարար չգնահատվելու դեպքում, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին 04.05.2017 թվականի թիվ 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան»:

2018 թվականի փետրվարի 14-ին procurement.am կայքում տեղադրվել են երեք առանձին ծածկագրերով բաց մրցույթների մասին երեք հայտարարություններ և հրավերներ՝

- ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ԳԾՆՇ-2018/ՃՈ՝ Երևան քաղաքում ճանապարհային գծանշումների իրականացման ծառայությունների մատուցում,
- ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ՆՇԱՆ-2018/ՃՈ՝ Երևան քաղաքում ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունների մատուցում,
- ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ԱԶԴԱՆՇԱՆ-ՃՈ/2018՝ Երևան քաղաքում լուսաազդանշանների պահպանման ծառայությունների մատուցում:

2018 թվականի մարտի 27-ին գնահատող հանձնաժողովի նիստերում (թիվ 4 նիստերի արձանագրություններ) տեղի է ունեցել հայտերի բացումը: Արձանագրվել է.

- գծանշումների իրականացման ծառայությունների մասով հայտ է ներկայացրել «Ուկռինվեստ» ՍՊԸ՝ 870,800.0 հազ. դրամ (1,044,960.0 հազ. դրամ՝ ներառյալ ԱԱՀ),
- ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունների մասով հայտ են ներկայացրել երկու ընկերություն՝

«Ուկռինվեստ» ՍՊԸ՝ 83,228.3 հազ. դրամ (99,874.0 հազ. դրամ՝ ներառյալ ԱԱՀ),
«ՌԱՕ Մարս» ՓԲԸ՝ 94,407.0 հազ. դրամ (113,288.4 հազ. դրամ՝ ներառյալ ԱԱՀ):

- լուսաազդանշանների պահպանման ծառայությունների մասով հայտ է ներկայացրել «Ուկռինվեստ» ՍՊԸ-ն՝ 370,858.3 հազ. դրամ (445,030.0 հազ. դրամ՝ ներառյալ ԱԱՀ):

Բոլոր երեք հրավերներով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ուկռինվեստ» ՍՊԸ՝ որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

2018 թվականի ապրիլի 4-ին հանձնաժողովի նիստերում (թիվ 5 նիստերի արձանագրություններ) կատարվել է գնահատման արդյունքների հաստատում՝ որակավորման պահանջներին համապատասխանության մասով, ըստ որի՝ որոշվել է բոլոր երեք մրցույթներով ընտրված մասնակից ճանաչել «Ուկռինվեստ» ՍՊԸ և վերջինիս հետ կնքել համապատասխան պայմանագրեր:

2018 թվականի մայիսի 4-ին procurement.am կայքում երեք մրցույթների մասով տեղադրվել է «Հայտարարություն կնքված պայմանագրի մասին» փաստաթուղթը, ըստ որի՝ գծանշումների իրականացման և լուսաազդանշանների պահպանման մասով ընտրված մասնակիցը որոշվել է 13.04.2018թ., չնայած, որ արձանագրությունը կազմվել էր 04.04.2018թ: Ըստ կայքի, այդ երկու ծառայությունների մասով ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկի մասին ծանուցվել է 23.04.2018թ., պայմանագրերը կնքվել են 02.05.2018թ., իսկ ճանապարհային նշանների տեղադրման մասով ծանուցվել է 19.04.2018թ., պայմանագիրը կնքվել է 03.05.2018թ., որը սակայն կնքվել է 02.05.2018թ.:

Procurement.am կայքում 02.05.2018թ. կնքված պայմանագրերի հետ հրապարակված են 2018 թվականի մայիսի 15-ին կնքված թիվ 1 համաձայնագրերը, ըստ որի՝

- ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ԳԾՆՇ-2018/ՃՈ գնման պայմանագրի մասով՝ համաձայնագրի ընդհանուր գինը կազմել է 429,644.0 հազ. դրամ, որը վճարվելու է արտաբյուջեից 2018 թվականի մայիսին՝ 119,954.9 հազ. դրամ և հոկտեմբերին՝ 309,689.1 հազ. դրամ,
- ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ՆՇԱՆ-2018/ՃՈ գնման պայմանագրի մասով՝ համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 38,541.0 հազ. դրամ, որը վճարվելու է արտաբյուջեից 2018 թվականի մայիսին՝ 14,089.2 հազ. դրամ և հոկտեմբերին՝ 24,451.8 հազ. դրամ,
- ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ԱԶԴԱՆՇԱՆ-ՃՈ/2018 գնման պայմանագրի մասով՝ համաձայնագրի ընդհանուր գինը կազմել է 318,071.0 հազ. դրամ, որը վճարվելու է արտաբյուջեից 2018 թվականի մայիս ամսին:

Ըստ procurement.am կայքում տեղադրված՝ «Հայտարարություն կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին» փաստաթղթի՝ կատարված փոփոխության պատճառ և հիմնավորում է նշվել՝ «նախատեսվել են ֆինանսական միջոցներ»:

2018 թվականի պետական բյուջեով այդ ծառայությունների համար գումար նախատեսված չի եղել: ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի թիվ 497-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ ոստիկանության «ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումների, գրանցման քննական ծառայությունների դիմաց վճարումների եվ այլ վճարովի ծառայություններ» ծրագրի գծով արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2018 թվականի նախահաշիվը, կատարվել են փոփոխություններ և լրացումներ 2018 թվականի պետական բյուջեում ու ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717-Ն որոշման

մեջ, որի համապատասխան հավելվածում (հավելված 12՝ գնումների պլան) ավելացել են այդ ծառայությունները՝ հետևյալ գումարներով՝

- Ճանապարհային գծանշումներ՝ 469,794.9 հազ. դրամ,
- Ճանապարհային նշանների տեղադրում՝ 57,705.0 հազ. դրամ,
- Լուսաազդանշանների պահպանման ծառայություններ՝ 321,259.9 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում ՀՀ ոստիկանության մրցույթի փաթեթում առկա, ինչպես նաև՝ armeps.am կայքում տեղադրված՝ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և այլ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է.

- Երեք մրցույթին էլ գնային առաջարկ ներկայացվել է «Ուկռինվեստ» ՍՊԸ և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ համատեղ գործունեության պայմանագիր կոնսորցիումի կողմից, սակայն գնահատող հանձնաժողովի թիվ 4 նիստերի և թիվ 5 նիստերի արձանագրություններում, որպես մասնակից նշված և գնահատված է միայն «Ուկռինվեստ» ՍՊԸ: Հայտերի փաթեթում առկա են «Ուկռինվեստ» ՍՊԸ և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ միջև 22.03.2018թ. կնքված համատեղ գործունեության երեք պայմանագրեր՝ երեք ծածկագրերով գնման ընթացակարգերին մասնակցելու և հետագայում հրավերով պահանջվող ծառայությունները իրականացնելու համար:
- Փաթեթներում առկա են նաև «Ուկռինվեստ» ՍՊԸ և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ կողմից մեկ անձի տրված լիազորագրեր՝ այդ ծածկագրերով մրցույթներին մասնակցելու, փաստաթղթեր ստանալու, պայմանագրեր ստորագրելու, ընկերությունների անունից հանդես գալու նպատակով: Սակայն գնահատող հանձնաժողովը որպես մասնակից գնահատել և հաղթող է ճանաչել «Ուկռինվեստ» ՍՊԸ, այլ ոչ թե՝ երկու ընկերությունների կոնսորցիումը, և պայմանագրերը կնքվել են «Ուկռինվեստ» ՍՊԸ հետ, որի անունից պայմանագրերը ստորագրել է ոչ թե լիազորված անձն, այլ այդ ընկերության տնօրենը:

Մրցույթի հրավերի 10.1 և 10.2 կետերի համաձայն՝ ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը, և ապահովումը

պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ողջ ծավալով կատարման վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ: Եթե պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են 70.0 մլն դրամը, սակայն պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա՝ պայմանագրի ապահովումը հատկացված ֆինանսական միջոցների մասով ընտրված մասնակիցը ներկայացնում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Մրցույթի փաստաթղթերի փաթեթում առկա են 02.05.2018թ. «Ուկռինվեստ» ՍՊԸ տուժանքի մասին երեք համաձայնագրերը, որոնք ներկայացվել են «Ուկռինվեստ»ՍՊԸ և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ համատեղ գործունեության կոնսորցիումի հիման վրա: Այս համաձայնագրերը վավեր են կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ: Նշված փաթեթում առկա են նաև «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ կողմից 2018 թվականի մայիսի 14-ին տրված երեք բանկային երաշխիքները՝ միայն «Ուկռինվեստ» ՍՊԸ հետ կնքված երեք պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման ապահովման մասով՝ ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ԳԾՆՇ-2018/ՃՈ՝ 43,000.0 հազ. դրամ, ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ՆՇԱՆ-2018/ՃՈ՝ 4,000.0 հազ. դրամ, ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ԱԶԴԱՆՇԱՆ-ՃՈ/2018՝ 32,000.0 հազ. դրամ: Բանկային երաշխիքները գործում են մինչև 25.12.2018թ.:

Հայտարարված երեք բաց մրցույթների արդյունքում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև՝ հրավերի 9.1 կետի համաձայն՝ հանձնաժողովի որոշումների հիման վրա պատվիրատուի կողմից 02.05.2018թ. կնքվել են երեք պայմանագրեր: ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման կարգի 29-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու (նման հայտարարություն չի եղել) կամ պայմանագիրը կնքվելու

օրվան հաջորդող օրը գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված: Հրավերի 9.8 կետի համաձայն՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը ավարտում է ընթացակարգը: Procurement.am կայքում տեղադրված է նույն գնահատող հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 24-ի նիստերի թիվ 6 արձանագրությունները (նույն երեք ծածկագրերով) բաց մրցույթի միջոցով գնումներ կատարելու՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստերի մասով: Սակայն, ոչ գնումների կայքում, ոչ էլ ՀՀ ոստիկանության մրցույթի փաթեթում չկա որևէ տեղեկատվություն՝ նախորդ գնման ընթացակարգերը չկայացած հայտարարելու, նոր մրցույթի հայտարարության և հրավերի, պայմանագրերի դադարեցման կամ չեղարկման մասին: Փաստացի արդեն իսկ ավարտված գնման ընթացակարգի շրջանակներում իրականացվել է հայտերի գնահատման նոր ընթացակարգ և կնքվել են նոր պայմանագրեր, կամ ճանապարհային գծանշումների, ճանապարհային նշանների տեղադրման և լուսաազդանշանների պահպանման ծառայությունների մատուցման գնման գործընթացը կատարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին անհամապատասխան:

Ուսումնասիրելով կայքում առկա տեղեկատվությունը և այդ պահին ըստ օրենսդրության արդեն չգործող հանձնաժողովի արձանագրությունները, պարզվել է, որ գնումների կայքում հրապարակված են նույն ծածկագրերով գնումների մասով նույն հայտերի կրկնակի բացման նիստերի արձանագրություններ (թիվ 6)՝

- ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ԳԾՆՇ-2018/ՃՈ ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Ուկռինվեստ» ՍՊԸ, որն աշխատում է համատեղ գործունեությամբ «Էյ Թի Սերվիս» ՍՊԸ հետ միասին, գինը՝ 870,800.0 հազ. դրամ կամ 1,044,960.0 հազ. դրամ՝ ԱԱՀ-ով,
- ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ՆՇԱՆ-2018/ՃՈ ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Ուկռինվեստ» ՍՊԸ, որն աշխատում է համատեղ գործունեությամբ «Էյ Թի Սերվիս» ՍՊԸ հետ միասին, գինը՝ 83,288.3 հազ. դրամ կամ 99,874.0

հազ. դրամ՝ ԱԱՀ-ով և «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն, գինը՝ 94,407.0 հազ. դրամ կամ 113,288.4 հազ. դրամ՝ ԱԱՀ-ով,

- ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ԱԶԴԱՆՇԱՆ-ՃՈ/2018 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Ուկռինվեստ» ՍՊԸ, որն աշխատում է համատեղ գործունեությամբ «Էյ Թի Սերվիս» ՍՊԸ հետ միասին, գինը՝ 370,858.3 հազ. դրամ կամ 445,030.0 հազ. դրամ՝ ԱԱՀ-ով:

Բոլոր երեք ծառայությունների մասով հանձնաժողովի կողմից գնահատվել են կրկին անգամ նույն գնային առաջարկները, և բոլոր երեք ծածկագրերով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ուկռինվեստ» ՍՊԸ՝ առանց հաշվի առնելու, որ հայտերը ներկայացված էին կոնսորցիումի կողմից: Հաջորդ օրը՝ 2018 թվականի մայիսի 25-ին, տեղի է ունեցել մասնակցի որակավորման պահանջների համապատասխանության գնահատման նիստը, ըստ որի բոլոր երեք ծածկագրերով գնման ընտրված մասնակից է ճանաչվել «Ուկռինվեստ» ՍՊԸ, որի հետ որոշվել է կնքել պայմանագրեր: Ըստ «Հայտարարություն կնքված պայմանագրի մասին» փաստաթղթերի, նույն օրը՝ 25.05.2018թ. ընտրված մասնակցին ծանուցվել է պայմանագրի կնքման առաջարկի մասին ու ՀՀ ոստիկանության և «Ուկռինվեստ» ՍՊԸ միջև կրկին կնքվել են հետևյալ երեք պայմանագրերը՝

- 31.05.2018թ. ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ԳԾՆՇ-2018/ՃՈ ծածկագրով Երևան քաղաքում ճանապարհային գծանշումների իրականացման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր՝ 1,044,960.0 հազ. դրամ առավելագույն գնով, սակայն առկա ֆինանսական միջոցներով նախատեսվել է կնքել 429,644.0 հազ. դրամի (ներառյալ՝ ԱԱՀ), պայմանագրի վճարման ժամանակացույցով գումարը պետք է վճարվեր 2018 թվականի հունիսին՝ 119,954.9 հազ. դրամ և հոկտեմբերին՝ 309,689.1 հազ. դրամ,
- 13.06.2018թ. ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ՆՇԱՆ-2018/ՃՈ ծածկագրով Երևան քաղաքում ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր՝ 99,874.0 հազ. դրամ առավելագույն գնով, սակայն առկա

ֆինանսական միջոցներով նախատեսվել է կնքել 38,541.0 հազ. դրամի (ներառյալ՝ ԱԱՀ), պայմանագրի վճարման ժամանակացույցով գումարը պետք է վճարվեր 2018 թվականի հունիսին՝ 14,089.2 հազ. դրամ և հոկտեմբերին՝ 24,451.8 հազ. դրամ,

- 31.05.2018թ. ՀՀԿԱՈ-ԲՄԾՁԲ-ԱԶԴԱՆՇԱՆ-ՃՈ/2018 ծածկագրով Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր՝ 445,030.0 հազ. դրամ առավելագույն գնով, սակայն առկա ֆինանսական միջոցներով նախատեսվել է կնքել 318,071.0 հազ. դրամի (ներառյալ՝ ԱԱՀ), պայմանագրի վճարման ժամանակացույցով գումարը պետք է վճարվեր 2018 թվականի հունիսին՝ 106,057.2 հազ. դրամ և հոկտեմբերին՝ 212,013.8 հազ. դրամ:

Ըստ կնքված պայմանագրերի 4.2 կետի՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում յուրաքանչյուրի մասով մնացած գումարների վճարումը կկատարվի կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով:

Փաստորեն, առկա փաստաթղթերով նկարագրված է նույն մրցույթների կրկնակի անցկացումը, կրկնակի անգամ պայմանագրերի կնքումը, իսկ գնումների կայքերում և ՀՀ ոստիկանության փաստաթղթերի փաթեթում առկա չէ գրառում առաջին փուլով կնքված պայմանագրերի դադարեցման կամ չեղարկման վերաբերյալ, ինչպես նաև առկա չեն երկրորդ մրցույթի համար հայտարարության, հրավերի, տեխնիկական բնութագրերի, մրցույթների անցկացման վերջնաժամկետների վերաբերյալ որևէ տեղեկատվություն:

Բացի այդ, 14.05.2018թ. տրամադրված բանկային երաշխիքները տրամադրվել էին այդ պահին կնքված պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման ապահովման համար, բայց ոչ՝ նոր կնքված պայմանագրերի ապահովման համար, իսկ դրանից հետո այլ բանկային երաշխիքներ չեն ներկայացվել: Փաստորեն, այդ փուլում կրկնակի կնքված պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը ապահովված չէր

բանկային երաշխիքներով, որը չի համապատասխանում հրավերի 10.1 և 10.2 կետերի պահանջներին:

ՀՀ ոստիկանության մրցույթի փաստաթղթերի փաթեթում առկա է 28.03.2018թ. գնահատող հանձնաժողովի հարցումը ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ուկռինվեստ» ՍՊԸ մասով, որին ի պատասխան 03.04.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչության կողմից ներկայացվել է եզրակացություն, ըստ որի, հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիներին «Ուկռինվեստ» ՍՊԸ համախառն եկամուտը կազմել է զրո դրամ: Ըստ taxservice.am կայքի՝ հարկ վճարողների փնտրման համակարգի, «Ուկռինվեստ» ՍՊԸ գրանցվել է 2017 թվականի փետրվարի 27-ին: Մրցույթի ամբողջ ընթացքում՝ հայտերի բացման նիստից մինչև պայմանագրի կնքումը, «Էս Թի Սերվիս» ՍՊԸ մասով մրցույթի փաթեթում հարցում առկա չէ:

Բաց մրցույթի հրավերի 1.1 կետի համաձայն՝ հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվում է տվյալ կազմակերպությունում աշխատող նվազագույնը 45 աշխատակիցների առկայություն՝ նմանատիպ աշխատանքային փորձի առկայությամբ: ՀՀ հաշվեքննիչ պալատի հարցմանն ի պատասխան, ՀՀ ՊԵԿ 17.03.2021թ. գրությամբ ներկայացվել է տեղեկատվություն, ըստ որի «Ուկռինվեստ» ՍՊԸ մինչև մրցույթի հայտերի բացման նիստը ունեցել է 0 աշխատող:

Բաց մրցույթի երեք հրավերների «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգի» 2.4. կետի համաձայն՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց)

շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ճանապարհային գծանշումների/ճանապարհային նշանների տեղադրման/լուսազդանշանների պահպանման ծառայությունների մատուցված լինելը,

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը,

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

2) «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

ՀՀ ոստիկանության մրցույթի փաստաթղթերի փաթեթում և գնումների կայքերում ներկայացված պահանջների բավարարման վերաբերյալ առկա չեն փաստաթղթեր ոչ «Ուկռինվեստ» ՍՊԸ, ոչ էլ՝ «Էս Թի Սերվիս» ՍՊԸ մասով:

«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.
- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով,

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն,

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Արդեն իսկ նշվել էր, որ ՀՀ ՊԵԿ տեղեկատվության համաձայն՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների (2015, 2016, 2017թթ.) «Ուկռինվեստ» ՍՊԸ համախառն եկամուտը կազմում է զրո դրամ: Հաշվի առնելով հրավերի վերոնշյալ պահանջները, գնահատող հանձնաժողովը իրավասու չէր 04.04.2018թ նիստում որակավորման պահանջներին համապատասխանության մասով բոլոր երեք ծածկագրերով ընտրված մասնակից ճանաչել «Ուկռինվեստ» ՍՊԸ, քանի որ վերջինիս գործունեության ցուցանիշները չեն համապատասխանել «Մասնագիտական փորձառություն», «Տեխնիկական միջոցներ» և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշների պահանջներին: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «Ճանապարհային ոստիկանության 09.01.2018թ.-ի թիվ 17-10-33 գրությամբ ներկայացված գնման հայտի հիման վրա 2018թ.-ի փետրվարին բաց մրցույթ <<ԲՄ>> գնման ձևի կիրառմամբ կազմակերպվել է 3 գնման ընթացակարգ՝ Երևան քաղաքում 2018-2019 թթ.-ի համար ճանապարհային գծանշումների իրականացման, ճանապարհային նշանների տեղադրման և լուսաազդանշանների պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով: Տվյալ ընթացակարգերին համապատասխան գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցել է «Ուկռինվեստ» ՍՊԸ-ն (հիմքը՝ «Ուկռինվեստ» ՍՊԸ -ի և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի 22.03.2018թ-ի «ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԻՎ-2» պայմանագրի 2-րդ կետ): Նշված գնման ընթացակարգերի արդյունքերով գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից է ճանաչվել «Ուկռինվեստ» ՍՊԸ-ն, որի հետ 02.05.2018թ-ին կնքվել է երեք պայմանագիր, որոնք (այդ թվում նաև արձանագրությունում նշված «Գծանշումների մասով» 02.05.2018թ-ին կնքված պայմանագիրը) սահմանված կարգով հրապարակված են և առկա են armeps.am կայքում: Օրենսդրությամբ սահմանված կարգով*

պայմանագրերը մուտքագրվել են <<CLIENT-TRESUARY>> -<<LSFinanse>> (ԳԳՕ) համակարգ (այսուհետ՝ համակարգ)՝ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ լիազորված մարմին) կողմից որպես պետության համար պարտավորություններ առաջացնող գնման գործարքներ հաշվառելու նպատակով: Սակայն, տվյալների անհամապատասխանությունների պատճառով լիազորված մարմնի կողմից դրանք չի հաշվառվել և 22.05.2018թ.-ի թիվ 03/26/9137-18 գրությամբ պահանջվել է ներկայացնել պարզաբանում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ: Լիազոր մարմնի կողմից արձանագրված անհամապատասխանությունները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներից հետո, պայմանագրերից 2-ը արդեն՝ 31.05.2018թ.-ի, իսկ մյուսը՝ 13.06.2018թ.-ի թվագրություններով կրկին անգամ մուտքագրվել են համակարգ և լիազորված մարմնի կողմից հաստատվել են համապատասանաբար ըստ պայմանագրերի՝ 05.06.2018թ.-ին և 14.06.2018թ.-ին: Այսպիսով, վերը նշված գնման առարկաների ձեռքբերման նպատակով նոր ընթացակարգեր չեն կազմակերպվել և նոր պայմանագրեր չեն կնքվել, այլ լիազոր մարմնի կողմից արձանագրված անհամապատասխանությունները վերացնելու ժամկետներին համապատասխան փոփոխության է ենթարկվել նույն պայմանագրերի միայն կնքման ժամկետները: Նշվածով պայմանավորված անփոփոխ են մնացել նաև 14.05.2018թ. տրամադրված բանկային երաշխիքները: Հարկ է նշել նաև, որ բոլոր՝ երեք պայմանագրերի 7.1 կետերի համաձայն պայմանագրերն ուժի մեջ են մտնում կողմերի ստորագրման պահից և գործում են մինչև կողմերի պայմանագրերով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը (շարունակական պայմանագրեր), որի համար հիմք է հանդիսացել Ճանապարհային ոստիկանության վերը նշված գրությամբ ներկայացված գնման հայտը: Ամփոփելով վերը շարադրվածը, նկատի ունենալով նաև գնման ընթացակարգերի կազմակերպման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունները, դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներն ու պայմանագրերի սահմանված կարգով հաշվառումը, հանգում

ենք այն եզրակացության, որ դրանք չեն հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման ընթացակարգի մասնակիցների շահերի ոտնահարմանը: Ըստ այդմ, փվյալ պայմանագրերը կնքվել և հաշվառման են ընդունվել գնումների օրենսդրության պահանջներին համապատասխան»:

«Ուկռինվեստ» ՍՊԸ հետ կնքված երեք պայմանագրերով սահմանված չեն առկա ֆինանսական միջոցների հաշվին 2018 թվականի համար նախատեսված աշխատանքների ծավալները և քանակները: Պայմանագրերում ծառայությունների քանակները ներկայացված են միայն պայմանագրերի առավելագույն գների դեպքում կատարվելիք քանակներով:

Պայմանագրերի շրջանակներում «Ուկռինվեստ» ՍՊԸ կատարված վճարումները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

ՀՀ ոստիկանության 2018թ. թվականի վճարումները «Ուկռինվեստ» ՍՊԸ

հազ. դրամ

Ծառայության համառոտ անվանումը	Պայմանագրով նախատեսված գումար	Վճարումները
Գծանշումների իրականացում	429,644.0	429,643.8
Նշանների տեղադրում	38,541.0	27,228.3
Լուսաազդանշանների պահպանում	318,071.0	226,708.0
Ընդամենը	786,256.0	683,580.1

Փաստորեն, միայն գծանշումների իրականացման մասով են վճարումները կատարվել ամբողջ ծավալով, իսկ մյուս երկու ծառայությունների համար վճարվել է նախատեսված գումարի համապատասխանաբար՝ 70,6% և 71,3%:

Կնքված պայմանագրերի դրույթների համաձայն՝ երեք ծառայությունների մրցույթները, պայմանագրերով սահմանված գները կամ պայմանագրերի առավելագույն գները նախատեսված են 2018 թվականի համար: Դրանից բացի այլ ֆինանսական միջոցներ նախատեսված չեն:

2018 թվականի ընթացքում կատարված վճարումներից հետո պայմանագրերը պետք է համարվեին ավարտված, քանի որ մրցույթի

փաստաթղթերում կամ 2019 թվականին պայմանագրերը շարունակական լինելու վերաբերյալ որևէ դրույթ նախատեսված չէ:

ՀՀ կառավարության 27.12.2018թ. թիվ 1515-Ն որոշման հավելված 12-ում 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի շրջանակներում իրականացվելիք գնումների պլանում այդ երեք ծառայությունների համար նախատեսվել են գումարներ՝

- Ճանապարհային գծանշումներ՝ 475,000.0 հազ. դրամ,
- Ճանապարհային նշանների տեղադրում՝ 47,500.0 հազ. դրամ,
- Լուսաազդանշանների պահպանման ծառայություններ՝ 98,000.0 հազ. դրամ:

ՀՀ ոստիկանությունը ճանապարհային ոստիկանության 2019 թվականի արտաբյուջետային ֆինանսավորման հայտի «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով այդ ծառայությունների գնման ձևը սահմանել է՝ բաց մրցույթ: Սակայն, այդ ծառայությունները մատուցելու համար 2019 թվականին բաց մրցույթներ չեն հայտարարվել: Փոխարենը փաստացի արդեն իսկ ավարտված երեք պայմանագրերի մասով 2019 թվականի փետրվարի 15-ին կողմերի միջև կնքվել են համաձայնագրեր (թիվ 1 համաձայնագիր), ըստ որի՝

- Ճանապարհային գծանշումների մասով համաձայնագրի գինը կազմում է 475,000.0 հազ. դրամ, պայմանագրի հավելված 1-ով նախատեսված ծառայությունները մատուցելու համար,
- Ճանապարհային նշանների տեղադրման մասով համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 47,500.0 հազ. դրամ, պայմանագրի հավելված 1-ով նախատեսված ծառայությունները մատուցելու համար,
- Լուսաազդանշանների պահպանման ծառայությունների մասով համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 98,000.0 հազ. դրամ, պայմանագրի հավելված 1-ի միայն 8-րդ տողով նախատեսված ծառայությունը՝ «Լուսացույցային օբյեկտների սպասարկում, պահպանում, շահագործում և վթարավերականգնում» մատուցելու համար: Փաստորեն, մնացած 7 տողերով ծառայությունների մատուցման համար գումար չի նախատեսվել այն դեպքում, երբ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի

հավելված 12-ով 98,000.0 հազ. դրամը նախատեսված էր 8 տեսակի ծառայությունների համար: Արդյունքում, մինչև սեպտեմբեր ամիսը ներառյալ կատարվել և վճարվել է միայն 8-րդ տողով նախատեսված ծառայությունը, իսկ մնացած 7 տեսակի ծառայություններ չեն մատուցվել:

Ընդ որում, 2019 թվականի համար կնքված երեք համաձայնագրերով սահմանված չեն նախատեսված ծառայությունների պահանջվող քանակները:

2019 թվականի ընթացքում «Ուկռինվեստ» ՍՊԸ գծանշումների ծառայությունների մատուցման համար վճարվել է ընդամենը 474,995.0 հազ. դրամ, որից՝ 381,057.8 հազ. դրամը վճարվել է մարտ-հոկտեմբեր ամիսների ընթացքում, իսկ 93,937.2 հազ. դրամը՝ դեկտեմբեր ամսին:

ՀՀ կառավարության 22.08.2019թ. թիվ 1076-Ն որոշմամբ թույլատրվել է ՀՀ ոստիկանությանը 31.05.2018թ. կնքված պայմանագրի շրջանակներում 2019 թվականի ընթացքում լուսացույցային օբյեկտների սպասարկման, պահպանման, շահագործման և վթարավերականգնման ծառայությունների ծավալն ավելացնել 145,254.0 հազ. դրամով:

Լուսաազդանշանների պահպանման ծառայությունների պայմանագրի մասով 2019 թվականի հոկտեմբեր 15-ին կողմերի միջև կնքվել է համաձայնագիր (համաձայնագիր թիվ 2), որով համաձայնագրի ընդհանուր գին է սահմանվել 163,151.0 հազ. դրամ, առանց նշելու, թե այդ գումարը պայմանագրի 8 տեսակներից որ ծառայությունների մատուցման համար է նախատեսված և ինչ քանակներով: 2019 թվականի դեկտեմբերի 20-ին, կամ տարվա ավարտից ընդամենը 10 օր առաջ, կողմերի միջև կնքվել է ևս մեկ համաձայնագիր՝ նույն թիվ 2 համարով, որով պայմանագրի հավելված 1-ի 8-րդ տողով նախատեսված ծառայության ֆինանսավորումն ապահովելու համար պայմանագրի հավելված 1-ում կատարվել են փոփոխություններ: Արդյունքում տեխնիկական բնութագրի թիվ 1-7 ծառայությունների քանակները կրճատվել են, դրա փոխարեն թիվ 8 (լուսացույցային օբյեկտների սպասարկում, պահպանում, շահագործում) ծառայության համար նախատեսվել է 342,614.6 հազ. դրամ: Եթե պայմանագիրը

2018 թվականին կնքելիս թիվ 8 ծառայությունը կազմում էր պայմանագրի արժեքի 44%-ը, ապա 2019 թվականին այն կազմել է 70%: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված է, որ պայմանագրի ընդհանուր գնի մինչև տաս տոկոս ավելացման դրույթի շրջանակներում պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալները կարող են ավելանալ միայն պայմանագրով ծառայության մատուցման համար սահմանված ժամկետում: Պայմանագրի շրջանակներում վերջին անգամ ծառայություն մատուցվել և հարկային հաշիվ դուրս է գրվել 2019 թվականի դեկտեմբերի 16-ին, աշխատանքների հանձնման ընդունման արձանագրությունը կազմվել է դեկտեմբերի 20-ին: Սակայն, նույն օրը կատարվել է պայմանագրի փոփոխություն և սահմանվել են ծառայությունների քանակներ, որոնք ավելի են փաստացի կատարված քանակներից: Պայմանագրի 4.2 կետի համաձայն՝ վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը: Փաստորեն, կատարված փոփոխությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման կարգի 56-րդ հետի 2-րդ ենթակետի և պայմանագրի 4.2 կետով սահմանված դրույթների պահանջներին:

Լուսաազդանշանների սպասարկման ծառայությունների համար 2019 թվականի ընթացքում «Ուկռինվեստ» ՍՊԸ-ին վճարվել է ընդամենը 222,816.0 հազ. դրամ, իսկ 2018 և 2019 թվականներին՝ 449,524.0 հազ. դրամ:

Լուսազդանշանների պահպանման ծառայությունների մատուցման համար կնքված պայմանագրի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» 1-ին տողի ծառայության՝ «Արդիականացման նպատակով առկա տրանսպորտային լուսացույցի տեղադրում առկա կոնսուլի, ճոպանի կամ կանգնակի վրա» համար տեխնիկական բնութագրով նախատեսվել է 400 հատի տեղադրում՝ 62,000 դրամ միավորի գնով, ընդհանուր գինը՝ 24,800.0 հազ. դրամ: 2018 և 2019 թվականներին տեղադրվել է ընդամենը 101 հատ, կամ նախատեսվածի 25%-ը (հավելված 3):

«Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» 2-րդ տողի ծառայության՝ «Արդիականացման նպատակով նոր տրանսպորտային լուսացույցների տեղադրում առկա կոնսուլի, ճոպանի կամ կանգնակի վրա» համար տեխնիկական բնութագրով նախատեսվել է 160 հատի տեղադրում՝ 439.0 հազ. դրամ միավորի գնով, ընդհանուր գինը՝ 70,240.0 հազ. դրամ: 2018 և 2019 թվականներին տեղադրվել է ընդամենը 96 հատ, կամ նախատեսվածի 60%-ը: Ծառայության արժեքը ներառում է նաև նոր տրանսպորտային լուսացույցի արժեքը: Պայմանագրով նոր լուսացույցների համար սահմանված են մի շարք տեխնիկական պահանջներ, ընդ որում, դրանք պետք է ունենան առնվազն 2 տարի երաշխիքային ժամկետ: «Ուկռինվեստ» ՍՊԸ կողմից ներկայացված վճարման փաստաթղթերում, հանձնման ընդունման ակտերում, կազմված արձանագրություններում և աշխատանքների կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացություններում չկա որևէ նշում, որով հնարավոր կլինի հիմնավորել լուսացույցների նոր լինելը, դրանց տեխնիկական պարամետրերի համապատասխանությունը տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին, ինչպես նաև երաշխիքային 2 տարի ժամկետի մեջ գտնվելու փաստը:

«Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» 3-րդ տողի ծառայության՝ «Արդիականացման նպատակով նոր հետիոտնային լուսացույցների տեղադրում առկա կանգնակի վրա» համար տեխնիկական բնութագրով նախատեսված է 80 հատի տեղադրում՝ 350.0 հազ. դրամ միավորի գնով, ընդհանուր գինը՝ 28,000.0 հազ. դրամ: 2018 և 2019 թվականներին տեղադրվել են 76 հատ, կամ նախատեսվածի 95%-ը: Ծառայության արժեքը ներառում է նաև նոր հետիոտնային լուսացույցի արժեքը: Պայմանագրով նոր լուսացույցների համար սահմանված են մի շարք տեխնիկական պահանջներ, այդ թվում՝ առնվազն 2 տարի երաշխիքային ժամկետ: Այդ տողով մատուցված ծառայությունների վերաբերյալ փաստաթղթերով չի հիմնավորվում տեղադրված հետիոտնային լուսացույցների նոր լինելը:

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» 4-րդ տողի ծառայության՝ «Արդիականացման նպատակով լուսացույցային կանգնակի պատրաստում և տեղադրում» համար տեխնիկական բնութագրով նախատեսվել է 160 հատ՝ 72.0 հազ. դրամ միավորի գնով, ընդհանուր գինը՝ 11,520.0 հազ. դրամ: 2018 և 2019 թվականներին տեղադրվել է 53 հատ, կամ նախատեսվածի 33%-ը:

«Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» 5-րդ ծառայության՝ «Արդիականացման նպատակով 8մմ-անոց ճոպանի մոնտաժում ամրացվող դետալներով» համար տեխնիկական բնութագրով նախատեսվել է 100 հատ՝ 84.0 հազ. դրամ միավորի գնով, ընդհանուր գինը՝ 8,400.0 հազ դրամ: Տեխնիկական բնութագրով պահանջվել է կանգնակները պատրաստել նոր, չօգտագործված երկաթյա խողովակներից՝ համապատասխան չափերով, որոնք պետք է ներկվեն մոխրագույն հակակոռոզիոն ներկով և պետք է տեղադրվեն Բ-15 դասի 0.2մ3 բետոնով: 2018 և 2019 թվականներին մոնտաժվել է ընդամենը 27 հատ, կամ նախատեսվածի 27%-ը:

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» 6-րդ ծառայության՝ «Արդիականացման նպատակով կոնսուլի պատրաստում և տեղադրում» տեխնիկական բնութագրով նախատեսվել է 100 հատ, 495.0 հազ. դրամ միավորի գնով, ընդհանուր գինը՝ 49,500.0 հազ. դրամ: 2018 և 2019 թվականներին տեղադրվել է ընդամենը 44 հատ, կամ նախատեսվածի 44%-ը:

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» 7-րդ տողի ծառայության՝ «Լուսացույցային օբյեկտների կոորդինացում» համար տեխնիկական բնութագրով նախատեսվել է 60 հատ, 920.0 հազ. դրամ միավորի գնով, ընդհանուր գինը՝ 55,200.0 հազ. դրամ: 2018 և 2019 թվականներին կատարվել է ընդամենը 17 օբյեկտների կոորդինացում, կամ նախատեսվածի 28%-ը: Տեխնիկական բնութագրի համաձայն՝ ծառայությունը ներառում է հին կարգավորիչի ապամոնտաժում, նոր սերնդի հեռակառավարվող կարգավորիչի մոնտաժում, էլեկտրական նոր մալուխների մոնտաժում, կոորդինացվող լուսացույցային օբյեկտի կառավարման ծրագրային ապահովման մշակում և

համատեղում, կամ համակցում արդեն իսկ գործող «Locator traffic management system» համակարգի հետ, երթևեկության ինտենսիվության հաշվարկ և անհրաժեշտության դեպքում՝ լուսացույցային օբյեկտի աշխատանքային ժամանակի կանոնակարգում: Ծառայության մատուցման արժեքը ներառում է նաև նոր սերնդի հեռակառավարվող կարգավորիչի արժեքը, որի համար սահմանված են մի շարք տեխնիկական պահանջներ: ՀՀ ոստիկանության կողմից «Ուկռինեստ» ՍՊԸ ներկայացված առաջադրանքներում այս ծառայության մասով նշված է միայն փողոցի կամ խաչմերուկի անվանումը և լուսացույցային օբյեկտների կոորդինացման անհրաժեշտ քանակը: Կատարված աշխատանքների մասին փաստաթղթերում համապատասխան փողոցի կամ խաչմերուկի անվան տակ նշված է ընդամենը՝ «տեղադրված է կարգավորիչ, 1 հատ»: Երկու տարվա ընթացքում «տեղադրված է կարգավորիչ, 1 հատ» 17 դրվագի համար վճարվել է ընդամենը 15,640.0 հազ. դրամ: Տեղադրված կարգավորչի նոր սերնդի հեռակառավարվող կարգավորիչ հանդիսանալու փաստը չի հիմնավորված, քանի որ առկա չէ կարգավորիչի վերաբերյալ որևէ տեխնիկական փաստաթուղթ: Բացի այդ, չի հիմնավորվում կոորդինացվող լուսացույցային օբյեկտի կառավարման ծրագրային ապահովման մշակում և համատեղումը կամ համակցումը արդեն իսկ գործող «Locator traffic management system» համակարգի հետ: «Locator traffic management system» համակարգի գտնվելու վայրի, հաշվեկշռում գրանցված լինելու, դրա սպասարկման վերաբերյալ հարցին Ճանապարհային ոստիկանությունը պատասխանել է, որ չեն տիրապետում տեղեկատվության:

Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի» 8-րդ տողի ծառայության՝ «Լուսացույցային օբյեկտների սպասարկում, պահպանում, շահագործում և վթարավերականգնում» համար տեխնիկական բնութագրով նախատեսվել է 255 օբյեկտ, 774.0 հազ. դրամ միավորի գնով, ընդհանուր գինը՝ 197,370.0 հազ. դրամ: Տեխնիկական բնութագրով նկարագրված են մի շարք աշխատանքներ, որոնք պետք է կատարվեն ծառայության շրջանակներում, մանրամասն նշելով դրանց կատարման ժամանակային պարբերականությունները

(10-օրյա, ամիսը մեկ, երեք ամիսը մեկ և այլ): Այս ծառայության մատուցման համար որևէ փաստաթղթով կամ հավելվածով նկարագրված չեն Երևան քաղաքի սպասարկման ենթակա լուսացույցային 255 օբյեկտները՝ ըստ առկա լուսացույցների քանակների և տեսակների՝ հետիոտնային, տրանսպորտային, լուսացույցների խմբի:

Ներկայացված վճարման փաստաթղթերի համաձայն՝ յուրաքանչյուր ամիս՝ նախատեսված 255 օբյեկտների փոխարեն իրականացվել է 249 լուսացույցային օբյեկտի սպասարկում, իսկ 2019 թվականի դեկտեմբերին կատարվել է 69 լուսացույցային օբյեկտի սպասարկում: Ներկայացրած փաստաթղթերով հնարավոր չէ պարզել յուրաքանչյուր ամիս սպասարկված օբյեկտների քանակը, 10-օրյա, ամսական կամ եռամսյակային ժամկետային պարբերականությամբ աշխատանքների կատարումը: Այսպես, 2018 թվականի միայն հուլիս, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին կատարողի կողմից ներկայացվել են նաև ամսվա բոլոր օրերին իրականացված աշխատանքները: Ըստ այդ աղյուսակի, կատարվել են ընդհանուր քանակներով «լուսացույցների լուսավորման սարքերի ստուգում, լամպերի լարման չափում և փոխարինում», առանց տարանջատելու օբյեկտները: Կատարողի կողմից ներկայացված փաստաթղթերում ոչ միշտ են տարանջատված լուսացույցային օբյեկտների հասցեները՝ ըստ մատուցված ծառայությունների, և չի հիմնավորվում յուրաքանչյուր ամսվա ընթացքում բոլոր 249 օբյեկտների սպասարկումը:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2019 թվականին մինչև հոկտեմբեր ամիսը ՀՀ ոստիկանության կողմից կատարողին տեխնիկական բնութագրի 1-ից մինչև 7 տողերի ծառայությունների մատուցման համար առաջադրանքներ չեն ներկայացվել: Այդ ընթացքում մատուցվել է միայն թիվ 8 տողի ծառայությունը: 2019 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին թիվ 1-ից մինչև 7 տողերի ծառայությունների համար ներկայացվել է թվով հինգ առաջադրանքներ: Ըստ պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից գրավոր առաջադրանքը

ստանալու օրվան հաջորդող օրվանից հաշված 5 կամ 10 (նայած, թե որ ծառայության մասին է խոսքը) աշխատանքային օրվա ընթացքում, առաջադրանքում նշված վայրերում ու քանակներով: Սակայն, քանի որ կատարողի կողմից ներկայացված փաստաթղթերում ծառայությունների մատուցման ամսաթվեր նշված չեն, աշխատանքներն ընդհանրական են նկարագրված տվյալ ամսվա համար, հնարավոր չէ պարզել արդյոք ծառայությունները մատուցվել են առաջադրանքը ստանալուց հետո համապատասխան ժամկետում, և արդյոք առկա են պայմանագրի 5.3 կետով նախատեսված ծառայության մատուցման ժամկետները խախտելու դեպքեր, որի համար պայմանագրով նախատեսված է տույժերի հաշվարկում և գանձում:

2019 թվականի դեկտեմբերի 2-ին տրված թիվ 5-րդ առաջադրանքով նախատեսված և դեկտեմբեր ամսվա ընթացքում փաստացի կատարված աշխատանքների միջև առկա է անհամապատասխանություն: Ըստ առաջադրանքի՝ պետք է կատարվեր 18 հատ լուսացույցային կանգնակի պատրաստում և տեղադրում, սակայն կատարվել է 15 հատի տեղադրում, պետք է կատարվեր 6 հատ կոնսուլի պատրաստում և տեղադրում, սակայն տեղադրվել է 8 հատ, պետք է կատարվեր լուսացույցային օբյեկտների 4 հատ կոորդինացում, սակայն տեղադրվել է 3 կարգավորիչ:

Հարկ է նշել, որ կնքված պայմանգրերով կարգավորված չէ ծառայությունների մատուցման ընթացքում պետական սեփականություն հանդիսացող փոխարինված հին սարքերի, դետալների և նյութերի հանձնման ընդունման գործընթացը: *ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պարզաբանում՝ «Ինչպես վերը նշվեց Երևան քաղաքում 2018-2019թթ.-ի համար ճանապարհային գծանշումների իրականացման, ճանապարհային նշանների տեղադրման և լուսաազդանշանների պահպանման ծառայությունների ձեռքբերման գնման հայտի հիման վրա, բաց մրցույթով կնքված բոլոր՝ երեք պայմանագրերի 7.1 կետերի համաձայն պայմանագրերն ուժի մեջ են մտնում կողմերի ստորագրման պահից և գործում են մինչև կողմերի պայմանագրերով*

ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Այդ իսկ պատճառով 2018թ.-ի ընթացքում կատարված վճարումներից հետո պայմանագրերն ավարտված չեն համարվել: Լուսաազդանշանների պահպանման ծառայությունների մատուցման համաձայնագրի 2019թ.-ի դեկտեմբերի 20-ի փոփոխություններով և նույն օրը ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրության հաստատմամբ, ըստ էության, փաստագրվել է 2019թ.-ի տարեվերջին արդեն իսկ փաստացի մատուցված ծառայությունների դիմաց ձևավորված պարտավորությունը: Խնդիրը կայանում է նրանում, որ տվյալ ծառայությունները բազմաբնույթ և բազմատեսակ են, խափանումները՝ հաճախ անկանխատեսելի և հնարավոր սեղմ ժամկետներում վերացման ենթակա: Լուսաազդանշանների շահագործման անընդհատության ապահովման նպատակով, բացի որոշակի պարբերականությամբ իրականացվող պրոֆիլակտիկ աշխատանքներից, յուրաքանչյուր անսարքության, խափանման դեպքում դրանց արագ վերացումը կատարվում է համապատասխան առաջադրանքների և (կամ) ժամկետների սղությամբ պայմանավորված՝ առանց դրա՝ աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների (կատարողական ակտերի) հիման վրա: Համանման դեպքերում փաստացի (իրականում) կատարված աշխատանքների գծով պարտավորությունները ձևավորելու և կատարման ընդունելու իրավական հիմքերը (անհրաժեշտ փաստաթղթավորումը) գործնականում կատարվում է արդեն իսկ կատարված աշխատանքներից հետո: Տեղադրված տրանսպորտային լուսացույցների նոր լինելը և դրանց համապատասխանությունը տեխնիկական բնութագրերին հիմնավորելու նպատակով կից ներկայացվում է արտադրող ընկերության՝ «Էլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի տրամադրած ճանապարհային լուսադիոդային լուսացույցների ՏՊ AM37505077.7566-2015 տեխնիկական պայմանները, որը «Ստանդարտների Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ-ում հաշվառվել է 24.06.2015թ.-ին N 12480, ինչպես նաև տեղեկանքը՝ նոր սերնդի ինտելեկտուալ լուսադիոդային նոր լուսացույցներ մատակարարելու վերաբերյալ: Ըստ այդմ նոր լուսացույցների տեխնիկական

բնութագրերը համապատասխանում են պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պայմաններին: Տեղադրված հեգիոդնային լուսացույցների նոր լինելը և դրանց համապատասխանությունը տեխնիկական բնութագրերի պահանջներին հիմնավորելու նպատակով կից ներկայացվում է արտադրող ընկերության կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերի պատճենները: Ծառայությունների մատուցման ընթացքում պետական սեփականություն հանդիսացող փոխարինված հին սարքերի, դետալների և նյութերի հանձնման–ընդունման գործընթացի կապակցությամբ հարկ է նշել է, որ արդիականացված լուսացուցային օբյեկտների հին լուսացույցերն օգտագործվել են Երևան քաղաքի այն լուսացուցային օբյեկտներում, որտեղ առկա է եղել ձախ կամ աջ երթևեկող տրանսպորտային միջոցների համար լուսացույցի տեսանելիության խնդիր՝ սեկցիաներն առանձնացվել են: Փոխարինված այլ գույքը (սարքեր, դետալներ, նյութեր) 2021 թ.-ի ապրիլին մուտքագրվել է ՀՀ ոստիկանության պահեստ»:

ՀՀ ոստիկանության «պետական հիմնարկի կողմից եկամուտների հավաքման մասին» հաշվետվությունների համաձայն՝ 2018 և 2019 թվականներին պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտները կազմել են համապատասխանաբար՝ 58,045.6 հազ. դրամ և 39,621.8 հազ. դրամ, կամ 2019 թվականին վարձակալությունից եկամուտները պակաս են 18,424.3 հազ. դրամով: Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2018 թվականի օգոստոսի 1-ին ՀՀ ոստիկանությունը և «Արարատբանկ» ԲԲԸ կնքել են տարածքի օգտագործման դիմաց վճարի պայմանագիր: Պայմանագրով սահմանվել է, որ «Արարատբանկ» ԲԲԸ սեփականության իրավունքով ՀՀ ոստիկանությանը պատկանող ք. Երևան, Գաջեգործների փողոց, թիվ 76 հասցեում գտնվող 15.4 քմ տարածքը 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի հուլիսի 31-ը ժամանակահատվածում օգտագործելու համար պարտավորվում է վճարել 19,507.1 հազ. դրամ: «Արարատբանկ» ԲԲԸ կողմից վճարումը կատարվել է 2018 թվականի օգոստոսի 3-ին: Դրանից հետո, մինչև 2018 թվականի նոյեմբեր ամիսը «Արարատբանկ» ԲԲԸ վճարել է վարձակալության

համար ամեն ամիս 250.0 հազ. դրամ: Նույն տարածքի վարձակալության համար օրենսդրությամբ սահմանված կարգով 2018 թվականի նոյեմբերի 13-ին Պետական գույքի կառավարման կոմիտեի և «Արարատբանկ» ԲԲԸ միջև կնքվել է ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր՝ 250.0 հազ. դրամ ամսական վարձավճարով: Փաստորեն, սկսած 2012 թվականի ապրիլից մինչև 2018 թվականի հուլիսի 31-ը ՀՀ ոստիկանության ՃՈ Երևանի հաշվառման քննական բաժնում, զբաղեցնելով 15.4 քմ տարածք, առանց վարձակալության իրավական ձևակերպման գործել է «Արարատբանկ» ԲԲԸ մասնաճյուղ, որի համար վճարումը կատարվել է 2018 թվականի օգոստոսի 3–ին:

ՀՀ ոստիկանությունը «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ հետ կնքել է տարածքի վարձակալության 30.03.2012թ. թիվ 109 պայմանագիր, ըստ որի վարձակալության է հանձնվել ք. Երևան, Գաջեգործների փողոց թիվ 76 հասցեում գտնվող անշարժ գույքից 15.0 քմ տարածք՝ բանկի մասնաճյուղ օգտագործելու նպատակով: Պայմանագրի գինը կազմում է ամսական 250.0 հազ. դրամ կամ 1 քառակուսի մետրը՝ 16.7 հազ. դրամ: Պայմանագիրը կնքվել է 5 տարի ժամկետով, որը ավարտվելուց հետո՝ 31.03.2017թ. թիվ 1-109 համաձայնագրով ժամկետը երկարաձգվել է մինչև 2022 թվականի մարտի 31-ը: 2018 թվականին վճարվել է 3,250.0 հազ. դրամ վարձավճար, 2019 թվականին՝ 3,500.0 հազ. դրամ վարձավճար: 2017 թվականին պայմանագրի ժամկետը ավարտվելուց հետո ՀՀ ոստիկանության կողմից պայմանագրի գործողության ժամկետը չպետք է երկարաձգվեր, այլ «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ «Կոմիտեն իրականացնում է պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրումը», պետք է հայտ ներկայացվեր Պետական գույքի կառավարման կոմիտե՝ նշված տարածքը վարձակալության տրամադրելու և պայմանագիր կնքելու համար:

Բացի այդ, Երևան քաղաքի Գաջեգործների 76 հասցեում գտնվող հաշվառման քննական բաժնի վարչական շենքում, առանց որևէ իրավական ձևակերպումների, գործում է Երևանի քաղաքապետարանի գույքահարկի

տեղեկատվական կենտրոնը, որը զբաղեցնում է 5.5 քմ տարածք: ՀՀ ոստիկանությունը 19.04.2019թ. գրությամբ դիմել է Պետական գույքի կառավարման կոմիտե նշված տարածքի վարձակալության պայմանագիր կնքելու համար, որին ի պատասխան վերջինս տեղեկացրել է, որ տարածքը սահմանված կարգով անհրաժեշտ է աճուրդով տրամադրել վարձակալության: ՀՀ ոստիկանությունը 07.05.2019թ. գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգով աճուրդին մասնակցելու վերաբերյալ: Քաղաքապետարանից ստացված գրության համաձայն՝ «Երևանի քաղաքապետարանի գույքահարկի տեղեկատվական կենտրոնը ճանապարհային ոստիկանություն ծառայության Երևանի հաշվառման քննական բաժնի վարչական շենքում տեղակայելը չի եղել քաղաքապետարանի նախաձեռնությունը, այլ ստեղծվել է բազմաթիվ քաղաքացիների խնդրանքով և ճանապարհային ոստիկանության առաջարկությամբ: Ուստի Երևանի քաղաքապետարանը առաջարկում է շարունակել համագործակցությունը գործող պայմաններով»: ՀՀ ոստիկանությունը 25.06.2019թ. դիմել է Պետական գույքի կառավարման կոմիտե, որպեսզի առաջարկվի Երևանի քաղաքապետարանին առանց աճուրդի կնքել պայմանագիր, սակայն ՀՀ ոստիկանության դիմումը մնացել է անպատասխան: Փաստորեն, առ հաշվեքննության պահը նշված տարածքը Երևանի քաղաքապետարանի կողմից օգտագործվում է առանց որևէ իրավական ձևակերպման:

ՀՀ ոստիկանությունը 25.02.2009թ. «Քոմփյութրոն Ինդասթրիզ Իսթաբլիշմենթ» ընկերության հետ (գրանցված է Լիխտենշտեյնում) կնքել է ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր, որով վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնվել ք. Երևան, Աբովյան 36 շենքի առաջին հարկում գտնվող 197.8 քմ մակերեսով ոչ բնակելի տարածք: Պայմանագիրը կնքվել է վարձակալության ուղղակի ձևով և գործում է մինչև 2045 թվականի դեկտեմբերի 31-ը, վարձակալության վճարը ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները սահմանվել է տարեկան 3,660.0 հազ դրամ:

2018 և 2019 թվականներին վարձավճարներն ընկերության կողմից վճարվել են ամբողջությամբ:

Պայմանագիրը կնքվել է 36 տարի ժամկետով՝ ՀՀ կառավարության 22.02.2001թ. «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի վարձակալության, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի՝ մինչև մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու մասին» թիվ 125-Ն որոշումով հաստատված կարգին անհամապատասխան, քանի որ ըստ կարգի 2-րդ և 3-րդ կետերի՝ պետական հիմնարկին ամրացված գույքը կարող է տրամադրվել վարձակալության ուղղակի ձևով, մրցույթով կամ աճուրդով, իսկ վարձակալության տրամադրման ժամկետները սահմանվում են՝

1) ներդրումային ծրագիր չներկայացվելու դեպքում՝ առավելագույնը 5 տարի ժամկետով.

2) գույքի բարելավման նպատակով ներդրումային ծրագիր ներկայացնելու կամ վարձակալի կողմից նախկինում ներդրումներ կատարված լինելու դեպքում՝ առավելագույնը 10 տարի ժամկետով:

Պայմանագրի 7.7 կետով նախատեսվել է, որ վարձակալն իրավունք ունի առանց վարձատուի համաձայնության տարածքը հանձնել ենթավարձակալության, պայմանով, որ ենթավարձակալների հետ հարաբերությունները կկարգավորվեն վարձակալի կողմից, իսկ վարձատուն տալիս է իր համաձայնությունը այն մասին, որ վարձակալն իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցի երրորդ անձանց: Հաշվեքննության ընթացքում ՀՀ կադաստրի կոմիտե կատարվել է հարցում՝ նշված տարածքի երրորդ անձանց վարձակալության տրամադրելու վերաբերյալ: Հարցմանն ի պատասխան ստացվել է ՀՀ կադաստրի կոմիտեի 2021 թվականի մարտի 12-ի թիվ ԱՊ/1501-2021 գրությունը, ըստ որի՝ «Քոմփյութրոն Ինդասթրիզ Իսթաբլիշմենթ» ընկերությունը 21.11.2018 թվականին «Ֆիգարո» ՍՊԸ հետ կնքել է այդ տարածքի ենթավարձակալության պայմանագիր՝ 3,880.0 հազ

դրամ ամսական վարձավճարով: Փաստորեն, պետական սեփականություն հանդիսացող ՀՀ ոստիկանության ոչ բնակելի տարածքը վարձակալը հանձնել է ենթավարձակալության, որի մեկ ամսվա վարձավճարը գերազանցում է իր կողմից վճարվող տարեկան վարձավճարի գումարը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը, «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ և ՀՀ ոստիկանությունը 06.07.2017թ. կնքել են ՀՀ պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման թիվ 15-2017 պայմանագիրը: Պայմանագրով սեփականատերը պարտավորվել է «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ ժամանակավոր օգտագործմանը ք.Երևան, Խանջյան 51 հասցեում տրամադրել գտնվող շենքի տանիքից 24.5 քառակուսի մետր մակերեսով տարածք՝ կապի սարքավորումների տեղակայման համար: Պայմանագրի գինը ամսական կազմում է 369.5 հազ. դրամ վարձավճար, 1 քմ՝ 15.1 հազ.դրամ: 2018 և 2019 թվականներին յուրաքանչյուր տարի վճարվել է 3,990.67 հազ դրամ: Նշված պայմանագիրը կնքվել է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Միաժամանակ, ՀՀ ոստիկանությունը «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ հետ 19.09.2005թ. կնքել է ծառայությունների մատուցման ARM-C 334/05 պայմանագիրը: Պայմանագրով ոստիկանությունը ք.Երևան, Խանջյան 51 հասցեում գտնվող նույն շենքի տանիքում տրամադրել է տարածքներ՝ 19 քմ բջջային կայանի սարքավորումների համար և 50 քմ տանիքում բջջային ռադիոռելեային ալեհավաքների և լարուղիների համար՝ բջջային համակարգի սարքավորումների տեղակայման և շահագործման նպատակով: Պայմանագրով նախատեսված վճարման ենթակա գումարը կազմում է ամսական 200.0 հազ դրամ, տարեկան վճարվել է 2,400.0 հազ դրամ: Փաստորեն, 1 քմ վարձավճարի գինը նույն շենքի տանիքում տեղակայված բջջային ռադիոռելեային ալեհավաքների և լարուղիների համար կազմում է 4.0 հազ դրամ, իսկ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրով՝ 15.1 հազ. դրամ: 2013 թվականի հոկտեմբերի 3-ին ընդունվել է ՀՀ պետական սեփականություն հանդիսացող

շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու վերաբերյալ համաձայնություն տալու և պայմանագրերի կնքման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության թիվ 1130-ն որոշումը, իսկ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին՝ «ՀՀ պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման պայմանագրի տիպային ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի վարչության թիվ 105-Ն հրամանը: 14.02.2014թ. ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 123-Ն և 19.02.2014թ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի թիվ 11-Ն համատեղ հրամանով հաստատվել է պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման համար ամսական վարձավճարների բաշխման կարգը: ՀՀ կառավարության 03.10.2013թ. թիվ 1130-ն որոշման 6-րդ կետը սահմանում է, որ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը ՀՀ պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու նպատակով էլեկտրոնային հաղորդակցության օպերատորների կողմից կնքված պայմանագրերը գործում են մինչև պայմանագրերի ժամկետների ավարտը, իսկ տվյալ հարաբերությունները կարգավորող նոր պայմանագրերը կնքվում են սույն որոշմամբ սահմանված կարգով: Սակայն, ՀՀ ոստիկանությունը 2015 թվականին «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ հետ պայմանագրի ժամկետը ավարտվելուց հետո սահմանված կարգին համապատասխան չի վերակնքել պայմանգիրը և չի վերահաշվարկել վարձավճարը, այլ պայմանգրի ժամկետը ուղղակի երկարաձգել է ևս 5 տարով:

ՀՀ ոստիկանությունը «Իզի Փեյ» ՍՊԸ հետ 01.02.2015թ. կնքել է ծառայությունների մատուցման թիվ 01 պայմանագիրը: ՀՀ ոստիկանությունը թույլատրել է տեղադրել տերմինալներ իրեն պատկանող տարածքներում՝ դրանց

համար նախատեսված վայրերում: Պայմանագրի անբաժանելի մաս համարվող հավելված 1/4 սահմանվել է տերմինալների տեղադրման համար նախատեսված վայրերի ցանկը, ըստ որի տեղադրվել է թվով 74 հատ տերմինալ: Պայմանգրով նախատեսվել է, որ երկու հասցեներում տեղադրված երկու տերմինալների համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի և զբաղեցրած տարածքի փոխհատուցում չի պահանջվում: Յուրաքանչյուր տերմինալի համար կատարողը պատվիրատուին յուրաքանչյուր ամսվա համար վճարում է 10,0 հազ.դրամ, ներառյալ՝ էլեկտրաէներգիայի վճարը: Հարկ է նշել, որ տեղադրված տերմինալի (մոդել ИП-01) ամսական էլեկտրաէներգիայի ծախսը ըստ դրվածքային հզորության՝ 450-500 Վտ, կազմում է 3.5 – 4.0 հազ. դրամ: «Իզի Փեյ» ՍՊԸ 2018 թվականին վճարել է 8,120.0 հազ դրամ, իսկ 2019 թվականին՝ 8,880.0 հազ դրամ վարձավճար:

ՀՀ ոստիկանությունը «Թել-Սել» ՓԲԸ հետ 22.02.2016թ. կնքել է վճարումների ընդունման ծառայությունների մատուցման թիվ 0/220216/01/30 պայմանագիր: Պայմանագրի անբաժանելի մաս համարվող հավելված 2-ով սահմանվել է տերմինալների տեղադրման համար նախատեսված վայրերի ցանկը, ըստ որի՝ 2018 թվականի հունվարից՝ 38 հատ, ապրիլի 4-ից՝ 39 հատ, 2019 թվականի փետրվարի 22-ից՝ 40 հատ, հունիսի 26-ից՝ 42 հատ: Նշված վայրերում տեղադրված յուրաքանչյուր տերմինալի համար կատարողը պատվիրատուին յուրաքանչյուր ամսվա համար վճարում է 10,0 հազ.դրամ: «Թել-Սել» ՓԲԸ 2018 թվականին վճարել է 4,240.0 հազ. դրամ, իսկ 2019 թվականին 4,875.5 հազ.դրամ վարձավճար:

ՀՀ ոստիկանությունը Ա/Ձ Արմեն Խաչատրյանի հետ 14.09.2018թ. կնքել է ոչ բնակելի տարածքների վարձակալության թիվ 49 պայմանագիրը՝ սուրճի սարքերի տեղադրման գործունեություն ծավալելու նպատակով: Օբյեկտների ընդհանուր մակերեսները և հասցեները ներկայացվել են պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված թիվ 1-ում և կազմում են 19 քմ: 2018 թվականին տեղադրվել է 19 հատ սուրճի ապարատ, յուրաքանչյուրը 8.0 հազ. դրամ կամ ընդամենը՝ 152.0 հազ. դրամ ամսական վարձավճարով, իսկ 2019 թվականին կնքված լրացուցիչ

համաձայնագրով՝ 17 հատ՝ 136.0 հազ. դրամ ամսական վարձավճարով, որի մեջ ներառված են նաև կոմունալ վճարները: 2018 թվականին պայմանագրով պետք է վճարվեր 537.1 հազ. դրամ, սակայն վճարվել է 405.0 հազ. դրամ, 2019 թվականին համապատասխանաբար՝ 1,648.0 հազ դրամ, վճարվել է 1,072.0 հազ դրամ, կամ երկու տարում պակաս է վճարել 708.1 հազ դրամ վարձավճար: Պայմանագրի 6.1 կետի համաձայն՝ վարձավճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար նախատեսված է տույժ՝ ապառքի 0.15 տոկոսի չափով: Վճարումներ ուշացնելու համար 2018 թվականին ենթակա էր հաշվարկել և գանձել՝ 15.2 հազ դրամ, իսկ 2019 թվականին՝ 392.4 հազ դրամ տույժ: Փաստորեն, 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ա/Ձ Արմեն Խաչատրյանից ենթակա է գանձել պետական բյուջե 1,115.7 հազ. դրամ վարձավճար և տույժ:

ՀՀ ոստիկանությունը Ա/Ձ Հարություն Հովհաննիսյանի հետ 21.05.2019 թվականին կնքել է ոչ բնակելի տարածքի վարձակալության թիվ 7 պայմանագիրը՝ սուրճի սարքերի տեղադրման գործունեություն ծավալելու նպատակով, 1 քմ մակերեսով: Ամենամսյա վարձավճարի չափը կազմում է 10.0 հազ. դրամ: Ա/Ձ Հարություն Հովհաննիսյանը 2019 թվականին վճարել է 63.2 հազ.դրամ վարձավճար: Հարկ է նշել, որ սուրճի սարքերի տեղադրման համար կնքված պայմանագերի շրջանակներում տեղադրվել են Necta ապրանքանիշի սարքեր, որոնց օգտագործվող հզորությունը, ըստ համացանցում առկա տվյալների, կազմում է 1800 Վտ:

Կնքված չորս պայմանագրերով նախատեսված չէ էլեկտրաէներգիայի ծախսի փոխհատուցման վերաբերյալ որևէ դրույթ:

Հարկ է նշել, որ պետական գույքի կառավարման կոմիտեի կայքէջում 29.06.2020թ. և 09.02.2021թ. տեղադրվել են աճուրդային եղանակով վարձակալության տրամադրվող ոչ բնակելի տարածքների վարձակալության հայտարարություններ, ըստ որի Երևան քաղաքում վճարային տերմինալների տեղադրման 1 քմ մակերեսի համար ամսական վարձավճարի մեկնարկային գին է

սահմանվել 35.0 հազ. դրամ, սուրճի ապարատի համար՝ 37.0 հազ. դրամ, բանկոմատի համար՝ 65.0 հազ. դրամ:

Վճարային տերմինալների և սուրճի սարքերի տեղադրման համար չորս պայմանագրերը ՀՀ ոստիկանության կողմից կնքվել են «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին անհամապատասխան, քանի որ օրենքի համաձայն՝ պետական գույքի կառավարման մարմինը պետական գույքի կառավարման կոմիտեն է, որը իրականացնում է պետական գույքի վարձակալության ու անհատույց օգտագործման տրամադրումը:

Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող թիկնապահական և պահնորդական գործունեությունը կարգավորվում է «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքով (ուժի մեջ է 2013 թվականի հունվարի 1-ից): Օրենքով սահմանվել է, որ թիկնապահական և պահնորդական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեն միայն սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձինք: ՀՀ կառավարության 30.08.2012թ. թիվ 1152-Ն որոշման թիվ 1 հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ մասնավոր պահնորդական գործունեության լիցենզավորումն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնելու յուրաքանչյուր լիցենզիայի համար, որը տրվում է անժամկետ, սահմանված է պետական տուրք՝ 500.0 հազ. դրամ: 2018 և 2019 թվականներին ՀՀ ոստիկանության կողմից մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնելու համար անժամկետ լիցենզիաներ են տրվել թվով 31 իրավաբանական անձանց (աղյուսակ 7), որի դիմաց այդ ժամանակահատվածում պետական բյուջե մուտք է եղել 15,652.0 հազ. դրամ պետական տուրք:

Աղյուսակ 7

2018 և 2019 թվականներին մասնավոր պահնորդական գործունեության լիցենզիաներ ստացած կազմակերպություններ

Հ/Հ	Կազմակերպության անվանաում	Լիցենզիայի համար	Տրման ամսաթիվ
1	«Վոլֆ Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 51	19.03.2018թ.
2	«Սմարթ Գարդ» ՍՊԸ	ՄՊԳ - 52	10.05.2018թ.
3	«Ալլիգատորս Պրոֆ Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 53	10.05.2018թ.
4	«Պատրիոտ Սեքյուրիթի Սերվիս» ՍՊԸ	ՄՊԳ - 54	22.06.2018թ.
5	«Էպիրուս» ՍՊԸ	ՄՊԳ - 55	14.08.2018թ.
6	«Իտալսեկ» ՍՊԸ	ՄՊԳ - 56	14.08.2018թ.
7	«Ա.Մ. Լեգիոն» ՍՊԸ	ՄՊԳ - 57	16.10.2018թ.
8	«Քինգ Մարշալ» ՍՊԸ	ՄՊԳ - 58	06.11.2018թ.
9	«Ալֆա Պրո»ՍՊԸ	ՄՊԳ - 59	24.11.2018թ.
10	«Սպեցնազ-Ռ» ՍՊԸ	ՄՊԳ - 60	14.12.2018թ.
11	«Օազիս» ՍՊԸ	ՄՊԳ - 61	14.12.2018թ.
12	«Սպարտա Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 62	23.01.2019թ.
13	«Գյուրզա» ՍՊԸ	ՄՊԳ - 63	21.02.2019թ.
14	«Էմ Ջի Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 64	21.02.2019թ.
15	«Գամբիտ Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 65	25.04.2019թ.
16	«Երեմյան Փրոջեքթս Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 66	25.04.2019թ.
17	«Ատրոքս Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 67	10.05.2019թ.
18	«Ա4Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 68	10.05.2019թ.
19	«Լիոն Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 69	25.06.2019թ.
20	«Ձեթ» ՍՊԸ	ՄՊԳ - 70	19.07.2019թ.
21	«Էդի Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 71	19.07.2019թ.
22	«Յունիգարդ Պրոտեկտիվ Սերվիսիս» ՍՊԸ	ՄՊԳ - 72	19.07.2019թ.
23	«Սիվիլ Սերվիս» ՍՊԸ	ՄՊԳ - 73	06.09.2019թ.
24	«Էլիտ Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 74	02.10.2019թ.
25	«Ավանգարդ Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 75	02.10.2019թ.
26	«Սօկօլ» ՍՊԸ	ՄՊԳ - 76	16.10.2019թ.
27	«ՄԷԱԳ» ԱՀԻԳ ՍՕՏ	ՄՊԳ - 77	19.11.2019թ.
28	«Յունիպրոտեկտ» ՍՊԸ	ՄՊԳ - 78	27.12.2019թ.
29	«Ակվա Սիկյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 79	27.12.2019թ.
30	«Գարդ Սերվիս» ՍՊԸ	ՄՊԳ - 80	27.12.2019թ.
31	«Արմ Մարշալ Սեքյուրիթի» ՍՊԸ	ՄՊԳ - 81	27.12.2019թ.

Ընդամենը սկսած 2013 թվականից լիցենզիա է տրվել 99 կազմակերպությունների:

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանվել է՝ «1. Մասնավոր պահնորդական կազմակերպությունների նկատմամբ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար կարող են կիրառվել պատասխանատվության հետևյալ միջոցները.

1) նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական,

2) լիցենզիայի գործողության կասեցում,

3) լիցենզիայի գործողության դադարեցում»:

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնավոր պահնորդական կազմակերպությունները առևտրային այլ գործունեությամբ զբաղվելու իրավունք չունեն, որը հանդիսանում է լիցենզիայի դադարեցման հիմք: Օրենքով սահմանվել է նաև, որ մասնավոր պահնորդական կազմակերպության լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզիա ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում պահնորդական ծառայություններ չիրականացնելու դեպքում:

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է՝ «Մասնավոր պահնորդական կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը»: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ պետական վերահսկողություն իրականացնելիս ոստիկանությունն իրավունք ունի մասնավոր պահնորդական կազմակերպությունում, ինչպես նաև պահնորդական ծառայություններ մատուցելու վայրում իրականացնելու ստուգումներ՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1 հոդվածի 2-րդ մասի և 3-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությունն է հաստատում՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև ստուգաթերթերը, որոնց հիման վրա անցկացվում են ստուգումները»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ պահնորդական գործունեության նկատմամբ ստուգումների մեթոդաբանությունը, նկարագիրը և ստուգաթերթերը ՀՀ կառավարության որոշումներով հաստատված չեն, և առ հաշվեքննության

պահը չեն կատարվում «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի պահանջները և լիցենզավորված մասնավոր թիկնապահական և պահնորդական կազմակերպությունների գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը:

ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվության համաձայն՝ 2019 թվականին պահնորդական գործունեության լիցենզիա ստացած «Յունիգարդ Պրոտեկտիվ Սերվիսիս» ՍՊԸ և «Ակվա Սիկյուրիթի» ՍՊԸ պահնորդական կազմակերպությունների գործունեությունը ժամանակավոր դադարեցված է: «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջի համաձայն՝ մեկ տարի պահնորդային գործունեությամբ չզբաղվելու դեպքում պետք է դադարեցվեր նաև տրամադրված պահնորդական գործունեության լիցենզիաների գործողությունը: Հաշվեքննությամբ պարզվել է, որ այդ կազմակերպությունների պահնորդական գործունեության լիցենզիաների գործողությունը չի դադարեցվել: ՀՀ ոստիկանության կողմից պահնորդական կազմակերպությունների նկատմամբ վերահսկողության բացակայության պատճառով հնարավոր չի պարզել այդ կազմակերպություններին տրամադրված լիցենզիաների գործողությունը՝ մեկ տարի ժամկետով պայմանավորված, դադարեցնելու ամիրաժեշտությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ոստիկանությանը՝

– գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի պահանջների հիման վրա իրականացնել հսկողություն հավատարմագրային կառավարման գործունեության, ինչպես նաև սկզբնական հաշվառման փաստաթղթերի միջոցով հատուցման ենթակա ծախսերի հիմնավորվածության նկատմամբ,

– պայմանագրով նախատեսված ապրանքների չմատակարարման, ինչպես նաև ապրանքների մատակարարման ժամկետների ուշացումների դեպքում

ապահովել պայմանագրերի ապահովման գումարների և տույժերի վճարումը պետական բյուջե,

– բացառել գնահատող հանձնաժողովների կողմից ապրանքների գնման ընթացակարգերի խախտումները,

– սահմանել պատշաճ հսկողություն ապրանքների և ծառայությունների ընդունման գործընթացի նկատմամբ՝ ապահովելով գնման առարկայի տեխնիկական բնութագրին և նախատեսված քանակներին համապատասխանությունը,

– պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության պայմանագրերը համապատասխանեցնել օրենսդրության պահանջներին,

– մասնավոր պահնորդական գործունեության նկատմամբ օրենսդրության համաձայն պետական վերահսկողությունը ապահովելու նպատակով՝ ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:

Հավելված 1

2018 թվականի «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ աշխատողների աշխատավարձի հաշվարկ

հազ. դրամ

Ամիս	ՃՈ կողմից փաստացի վճարված	Ըստ հաշվետվությունների				Տարբերություն
		Հաշվարկված աշխատավարձ	Գործատուների միջոցներով վճարված նպաստների գումար	Եկամտային հարկից նվազեցվող նպաստների գումար	Աշխատավարձը՝ նվազեցումից հետո	
Հունվար	89,194.7	87,348.2	521.2	1,058.2	86,811.2	2,383.5
Փետրվար	93,056.8	90,993.9	939.7	1,440.2	90,493.4	2,563.4
Մարտ	102,379.5	100,441.1	809.1	403.7	100,846.6	1,532.9
Ապրիլ	98,449.9	97,397.7	616.1	660.0	97,353.7	1,096.2
Մայիս	108,954.6	105,477.9	736.2	2,033.4	104,180.8	4,773.9
Հունիս	108,688.9	106,184.9	405.6	664.3	105,926.3	2,762.7
Հուլիս	109,702.8	107,722.3	1,163.9	1,664.8	107,221.4	2,481.4
Օգոստոս	107,894.2	107,268.0	638.5	1,539.2	106,367.4	1,526.8
Սեպտեմբեր	105,103.6	103,502.7	321.7	1,556.6	102,267.8	2,835.8
Հոկտեմբեր	102,312.9	99,845.0	773.7	1,959.6	98,659.1	3,653.7
Նոյեմբեր	103,031.2	101,038.6	665.9	1,236.4	100,468.2	2,563.0
Դեկտեմբեր	108,222.3	106,999.9	597.3	547.3	107,049.9	1,172.3
Ընդամենը	1,236,991.4	1,214,220.3	8,189.0	14,763.7	1,207,645.6	29,345.7

Հավելված 2

2019 թվականի «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ աշխատողների աշխատավարձի հաշվարկ

հազ. դրամ

Ամիս	ՃՈ կողմից փաստացի վճարված	Ըստ հաշվետվությունների				Տարբերություն
		Հաշվարկված աշխատավարձ	Գործատուների միջոցներով վճարված նպաստների գումար	Եկամտային հարկից նվազեցվող նպաստների գումար	Աշխատավարձը՝ նվազեցումից հետո	
Հունվար	91,024.0	87,366.2	546.1	3,091.8	84,820.5	6,203.5
Փետրվար	100,982.4	97,273.3	1,131.0	2,661.2	95,743.1	5,239.4
Մարտ	115,927.0	111,794.4	991.9	3,195.8	109,590.5	6,336.4
Ապրիլ	110,933.1	108,362.9	827.4	1,250.3	107,940.0	2,993.1
Մայիս	120,323.8	117,619.5	449.0	1,339.2	116,729.3	3,594.5
Հունիս	105,180.5	104,058.4	649.5	4,175.2	100,532.6	4,647.9
Հուլիս	121,666.3	117,096.2	698.7	5,320.3	112,474.6	9,191.6
Օգոստոս *	112,909.4	114,227.0	59.9	170.2	114,116.7	-
Սեպտեմբեր	114,553.8	109,841.6	1,414.0	3,283.5	107,972.2	6,581.6
Հոկտեմբեր *	104,852.2	107,999.6	1,029.0	853.1	108,175.5	-
Նոյեմբեր *	97,298.7	109,964.1	909.2	1,336.3	109,537.0	-
Դեկտեմբեր *	96,034.2	99,870.8	925.7	951.7	99,844.8	-
Ընդամենը	1,291,685.5	1,285,474.1	9,631.3	27,628.5	1,267,476.9	44,788.1

* Ծանոթացում. Օգոստոս, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների աշխատավարձը նվազեցումից հետո գերազանցել է ՃՈ կողմից վճարումը:

Հավելված 3

Երևան քաղաքում լուսաազդանշանների պահպանման ծառայություններ

հազար դրամ

h/h	Ծառայությունների տեսակներ	Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված			2018 թվականին փաստացի կատարված			2019 թվականին փաստացի կատարված			2018 և 2019 թվականներին փաստացի կատարվածթթ. փաստացի ծառայությունները		
		Քանակը (հատ)	Միավորի գինը	Գումար	Քանակը (հատ)	Միավորի գինը	Գումար	Քանակը (հատ)	Միավորի գինը	Գումար	Քանակը (հատ)	Կատարո-ղական (%)	Գումար
1	Արդիականացման նպատակով առկա տրանսպորտային լուսացույցի տեղադրում առկա կոնսուլի կամ ճոպանի վրա	400	62.0	24,800.0	90	62.0	5,580.0	11	62.0	682.0	101	25%	6,262.0
2	Արդիականացման նպատակով նոր տրանսպորտային լուսացույցերի տեղադրում առկա կոնսուլի, ճոպանի կամ կանգնակի վրա	160	439.0	70,240.0	57	439.0	25,023.0	39	439.0	17,121.0	96	60%	42,144.0
3	Արդիականացման նպատակով նոր հետիոտնային լուսացույցի տեղադրում առկա կանգնակի վրա	80	350.0	28,000.0	44	350.0	15,400.0	32	350.0	11,200.0	76	95%	26,600.0
4	Արդիականացման նպատակով յուսացույցային կանգնակի պատրաստում և տեղադրում	160	72.0	11,520.0	29	72.0	2,088.0	24	72.0	1,728.0	53	33%	3,816.0
5	Արդիականացման նպատակով 8մմ-անոց ճոպանի մոնտաժում ամրացնող դետալներով	100	84.0	8,400.0	16	84.0	1,344.0	11	84.0	924.0	27	27%	2,268.0
6	Արդիականացման նպատակով կոնսուլի պատրաստում և տեղադրում	100	495.0	49,500.0	33	495.0	16,335.0	11	495.0	5,445.0	44	44%	21,780.0
7	Լուսացույցային օբյեկտների կոորդինացում	60	920.0	55,200.0	12	920.0	11,040.0	5	920.0	4,600.0	17	28%	15,640.0
8	Լուսացույցային օբյեկտների	255	774.0	197,370.0	249	602.0	149,898.0	249/69		181,116.0			331,014.0

	սպասարկում, պահպանում, շահագործում և վթարավերականգնում												
	Ընդամենը			**445,030.0**			**226,708.0**			**222,816.0**			**449,524.0**